102

DIOCESE OF THE ARMENIAN
CHURCH
630 SECOND AVE.
NEW YORK N.Y. 10016

ՆՈՐՕՐ եռօրեայ

NOR OR SEMI-WEEKLY (ISSN 0029-1161)
7466 Beverly Blvd., Los Angeles, Cal. 90036

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ Ռ.Ա.Կ.Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 23, 1986 · 64-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 88 · TUESDAY, DECEMBER 23, 1986

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ



80-ԱՄԵԱԿԻ ՓԱՐԻԶԻ ՓԱՌԱՀԵՂ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՅՍ ԹԻՒԻՆ ԱՇԽԱՏԱԿՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐԸ.— ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ՏԱՔԷՍԵԱՆ, ՀՐԱՆԴ ՏԻՒԶԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-ի Փարիզի Համաժողովը Կամուրջներ կը Հաստատէ Աշխարհի Բոլոր Հայ Գաղութներուն Միջեւ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ֆրանսայի շրջանակը, որ վերակազմակերպութեան ընթացքի մը մէջ է, նոր ու անսահման եռանդով կազմակերպած էր Հ.Բ.Ը. Միութեան 73-րդ Ընդհանուր Անդամական Ժողովն ու 80-ամեակի հանդիսութեանց փառահեղ շարքը, գերազանցելով 20 երկիրներէ ժամանող աւելի քան 200 հիւրերու եւ պատգամաւորներու ամէնէն խիզախ ակնկալութիւնները: Ճաշակը, գեղեցկութիւնը, հնարամտութիւնն ու հիւրընկալութեան ջերմ ոգին մնացած էին Նոյեմբեր 19-էն 23-ը երկարող փարիզեան օրերը վերածելու անմոռանալի շաբաթի մը:

Սփիւռքի յոբելեանական խրախճանքին կը միանար նաեւ հայրենիքը,յանձին Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ Պր. Կարլէն Դալլաքեանի, որ կը բերէր հայրենի մեր հարազատներուն շունչն ու պատգամը:

Փարիզի Էնթերքոնթինանթալ պանդոկը ժամադրավայրը դարձած էր Բարեգործականի ներկայացուցիչներուն եւ հիւրերու:

Գլխապտոյտ պատճառող արագութեամբ մը իրար յաջորդեցին համագաղութային խորհրդակցական համաժողովը, Միութեան ընդհանուր ժողովը, հիւրասիրութիւնները - ամերիկեան դեսպանատան, Փարիզի քաղաքապետարանին եւ Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ, եզրափակուելու համար անմոռանալի պարահանդէսով մը որ լէյզրի լոյսերով հայկական այբուբենով կը գունաւորէր Էնթերքոնթինանթալի սրահը, պատմելով հայ ժողովուրդի ու Բարեգործականի կեանքը՝ պատկերներու լրացուցիչ եւ արագաթռիչ շողարձակումներով:

Բարեգործականի հաւատաւորները իրենց երկիրները վերադարձան, խոնարհելէ ետք Պօղոս Նուպարի շիրիմին առջեւ, իրենց հետ տանելով յուզման, բարեկամութիւններու եւ իրագործումներու գիտակցութեան կազդուրիչ զգացումներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Շուրջ 140 ամերիկահայեր ու գանատահայեր Շորեքշաբթի, Նոյեմբեր 19-ի երեկոյեան փութացած էին Փարիզի ամերիկեան դեսպանին շքեղ ապարանքը վայելելու համար փայլուն ընդունելութիւն մը, որուն ընթացքին ջերմօրէն ողջունուեցան դեսպան Պր. Ճոզըֆ Ռուճըրզի կողմէ: Խօսք առաւ նաեւ ՄԱԿ-ի մօտ Ամերիկայի նախկին դեսպան Պր. Սէթ Մոմճեան: Ճնորհակալութեան պատասխան խօսքով հանդէս եկաւ Հ.Բ.Ը. Միութեան ցկեանս նախագահը՝ Տիար Ալեք Մանուկեան:

Հիւրերը ապա առաջնորդուեցան Հ.Բ.Ը. Միութեան Փարիզի Ալեք Մանուկեան Կեդրոնը, ուր վայելեցին հայկական ջերմ հիւրասիրութիւն մը, գեղարուեստական ցուցահանդէսի հաճելի մթնոլորտի մը մէջ:

20 երկիրներու ներկայացուցիչներ մասնակցեցան 73-րդ Համաժողովին.

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հինգշաբթի եւ Ուրբաթ, Նոյեմբեր 20 եւ 21-ին, Միութեան Ալեք Մանուկեան սրահին մէջ շուրջ 140 ներկայացուցիչներ խորհրդակցեցան Միութեան կենսական հարցերուն եւ ապագային մասին, առողջ ու լարուած մթնոլորտի մը մէջ. անոնք ողջունուեցան ցկեանս նախագահին կողմէ: Զեկոյցներ ներկայացուեցան Միութեան կրթական, բարեսիրական, երիտասարդական եւ մշակութային առաքելութեանց շուրջ:

ԱՐՈՒԵՍՏԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍՆԵՐ

Միութեան 80-ամեակը գեղեցկութեամբ դիմաւորող հայկական ցուցահանդէսներ կազմակերպուած էին Հայկական թանգարանին, Կալըրի Ֆրամանի, Կալըրի Կորքիի եւ Կալըրի Մարիճեանի մէջ, ուր շրջագայող հիւրերը վայելեցին հին հայկական արուեստի առարկաներէն մինչեւ Գառզուի, Ժանսէմի, Ասատուրի եւ այլ արուեստագէտներու ստեղծագործութիւնները:

«ԱՆՈՆՔ ԻՆԿԱՆ» Կ'ԸՍԷ ԱԶՆԱՒՈՒՐ «ՖՐԱՆՍԱ ՉԻ ՄՈՌՆԱՐ» ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ՎԱՐՉԱՊԵՏ ՇԻՐԱՔ

Վեց հարիւրի մօտ հրաւիրեալներ, նախարարներ, դեսպաններ եւ արուեստի ականաւոր դէմքեր հաւաքուած էին Փարիզի քաղաքապետին շքեղ ապարանքը, վայելելու համար նախ Ազնաւուրի սրտայոյզ համերգը, որ արցունք քամեց սիրտերէ եւ աչքերէ. ապա պատմական կամարներուն տակ հնչեց Եղեռնին նուիրուած «Անոնք ինկան» երգը, որուն վարչապետ Շիրաք ճաշկերոյթէն ետք պատասխանեց. «Ֆրանսա զուրկ չէ յիշողութենէ»: Տոքթ. Էտուար Ադամեան երախտագիտութիւն յայտնեց հիւրընկալ Տէր եւ Տիկին Շիրաքներուն:

«Շիրակը առատութեան եւ լիութեան խորհրդանիշ մըն է», ըսաւ Ա. Մանուկեան. «այդ խորհրդանիշով ալ ծաղկում եւ յառաջդիմութիւն կը մաղթեմ Ֆրանսայի՝ Շիրաքի առաջնորդութեան ներքեւ»:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆ

Միջազգային համբաւի տիրացած աստղերով բոցավառ երաժշտական փառատօնը կայացաւ Ուրբաթ երեկոյ, Նոյեմբեր 21-ին, Կաւօ սրահին մէջ, յորդ բազմութեան մը ներկայութեան: Համերգի կազմակերպիչ Գրիգոր Հաւբարձումեան հրաւիրած էր Մարսէյլի Սամակ-Մեսրոպ Երգչախումբը՝ Խաչիկ Եղլմազեանի ղեկավարութեամբ, ջութակահար Տէր-Մերկերեանը, տաւիղահար Սուզաննա Մելտոնեանը, դաշնակահարներ Անի եւ Ռաֆֆի Պետրոսեանները եւ Այտա Մուրատեանը եւ Ամերիկայէն ջութակահար քոյրեր Անի եւ Այտա Գավաֆեանները, ինչպէս նաեւ հոյլ մը անուանի օտար արուեստագէտներ երաժշտական խրախճանք մը պարգեւեցին խանդավառ հանդիսականներուն:

$10 ՄԻԼԻՈՆ ՅԱՏԿԱՑՈՒՄ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄԻ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԴԱՆԻԷԼ ԶԱՐՈՒԿԵԱՆԻ ՆՈՒԷՐԸ

Միութեան 73-րդ Համաժողովը կայացաւ Շաբաթ 22 Նոյեմբերին, Էնթերքոնթինանթալ պանդոկին մէջ: Հայրենիքէն ներկայ էր եւ խօսք առաւ Կարլէն Դալլաքեան:

Նախագահ Ս. Մանուկեան իր բացման ճառին մէջ յայտարարեց թէ Միութիւնը 1985-ին ծախսած էր աւելի քան 10 միլիոն տոլար ազգապահպանումի նպատակներու: Միութեան գոյքին ընդհանուր արժէքը բարձրացած էր 83 միլիոն տոլարի, արձանագրելով 10 միլիոն տոլարի յաւելում մը: Օրուան անակնկալներն էին Տէր եւ Տիկ. Դանիէլ եւ Ալիս Զարուկեաններու մէկ միլիոն տոլարի սրտաբուխ նուիրատուութիւնը՝ ի նպաստ Թորոնթոյի դպրոցաշէնքի կառուցման. եւ մէկ միլիոնի հասնող ինքնամատոյց այլ նուէրներ:

Նախագահ Մանուկեան Հ.Բ.Ը. Միութեան կրթական առաքելութիւնը խորհրդանշող տնօրէն Արա Թօփճեանին կը շնորհէ «Ականաւոր կրթական մշակ»ի կոչումը:

ՓԱԿՄԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Էնթերքոնթինանթալի «Էմփերիալ» սրահը ողողող բազմութիւնը կը վայելէ խանդավառ պարահանդէս մը. նախագահ Մանուկեանի յուզիչ ճառին կը յաջորդէ լէյզրի խաղերով երաժշտական եւ լուսային պատումը Միութեան եւ հայութեան պատմութեան:

ՅԱՐԳԱՆՔԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Աշխարհի տարբեր երկրամասերէն եկող պատուիրակները Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ մատուցուած սուրբ պատարագին ներկայ գտնուելէ ետք, ուղղուեցան դէպի Փէր Լաշէզի գերեզմանատունը, յարգանք մատուցելու Հ.Բ.Ը. Միութեան հիմնադիր Պօղոս Նուպար Փաշայի յիշատակին՝ այցելելով անոր շիրիմը: Նուպար Փաշայի արժանաւոր յաջորդին՝ Ա. Մանուկեանի յուզիչ վկայութենէն ետք, ուխտաւորները այցի գացին հայ մարտական հանճար Զօրավար Անդրանիկի շիրիմին, ուրկէ «Իբրեւ Արծիւ» սաւառնեցան կրկին դէպի աշխարհի հինգ ցամաքամասերը:

ՅՈՒԶԻՉ, ԱՐԴԻՒՆԱՒԷՏ ԵՒ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐԵՐՈՒ ՎԵՐԱԾՈՒԵՑԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 73-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ ՓԱՌԱՀԵՂ ՇԱՐՔԸ:

Հ.Բ.Ը. Միութեան 80-ամեայ երախտաշատ վաստակը տպաւորիչ կերպով կը ճառագայթապատկերուի պաստառի վրայ

ՆՈՐ ՕՐ
եռօրեայ

Կը հրատարակուի
Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը

Պատասխանատու խմբագիր
Սարգիս ՄԻՆԱՍԵԱՆ

Խմբագրական կազմ
Նուպար ԱԿԻՇԵԱՆ
Վաչէ ՍԵՄԵՐՃԵԱՆ
Ասատուր ՏԷՎԼԵԹԵԱՆ

Վարիչ-Տնօրէն
Փայլակ ԱՀԱՐՈՆԵԱՆ

NOR OR
SEMI WEEKLY
(ISSN 0029-1161 USPS 391-380)
Published every Tuesday & Friday
(except holidays (2 weeks in July)
by
ARMENIAN DEMOCRATIC
LIBERAL ORGANIZATION

Second class postage paid at
Los Angeles, CA 90036
Postmaster: Please send address changes to:
NOR OR
7466 Beverly Blvd. # 201
Los Angeles, CA 90036

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Մ. Նահանգներու դեսպան Պրն. Ճօզըֆ Ռոճըրզ

Դեսպան եւ Տիկին Ռոճըրզներու հետ կը զրուցեն Նախագահ եւ Տիկին Ա. Մանուկեան եւ Տէր եւ Տիկին Սէթ Մոմճեան

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 80-ամեակի տօնակատարութեանց առթիւ Փարիզ գտնուող շուրջ 140 ամերիկահայեր եւ քանատահայեր մասնաւոր հրաւէրով հիւրը եղան ամերիկեան դեսպան Տէր եւ Տիկ. Ճօզըֆ Ռոճըրզի, իրենց վերանորոգուած ու շքեղ բնակարանին մէջ, Շորեքշաբթի, 19 Նոյեմբերին:

Իր շնորհակալական խօսքին մէջ, Հ.Բ.Ը. Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեան վեր առաւ Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնին մէջ Միացեալ Նահանգներ գտնուելու իրողութիւնը ու մանաւանդ շեշտեց թէ հայերը Միացեալ Նահանգներու մէջ է որ առաջին անգամ կիրարկեցին ֆրանսական լուսաւոր գաղափարներէն ստացած իրենց սնունդը:

«Ոչ մէկ ուրիշ երկիր — ըսաւ նախագահ Մանուկեան — հայերու համար աւելի մեծ նշանակութիւն ունի քան Ամերիկան», ի մասնաւորի հիմա երբ 550,000 հայեր իրենց տունը դարձուցին այս օրինակելի երկիրը: «Որպէս ժողովուրդ, շատ բան սորվեցանք ամերիկացիներէ — շարունակեց Պրն. Ա. Մանուկեան,— առատաձեռնութիւնը շատ մը ամերիկացիներու որոնք օգնեցին Միջին Արեւելքի նպաստամատոյցին եւ կենդանի պահեցին հայերը իրենց ամէնէն մութ օրերուն: Ինքնազոհութիւնը միսիոնարներու, որոնք հաստատեցին դպրոց, դարմանատուն եւ որբանոց՝ բազմահազար հայերու համար, զգայնութիւնը եւ մարդկային իրաւունքներու ջերմ պաշտպանութիւնը ուրիշ ամերիկեան դեսպանի մը՝ Հենրի Մորկընթոյի, առաջնորդութիւնն ու նկարագրի անխախտութիւնը ամերիկացի նախագահի մը՝ Ուուտրօ Ուիլսընի, որուն երազն էր տեսնել ազատ եւ անկախ, ապահով հայկական պետութիւն մը:

Ձախին՝ Տիկ. Ալիս Կիրիկեան, «Փարիզ-80»ի միջազգային համակարգիչ. աջին՝ Կարպիս Կիրիկեան, անդամ Կեդր. Վարչութեան. մէջտեղը՝ Գրիգոր Քէօսէեան, «Պայքար»ի խմբագիր

Պրն. Սեթ Մոմճեան, Հոլոքոսթի Ցիշատակութեան Խորհուրդի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովի անդամ, ներկայացուց դեսպանը որպէս նախագահ Ռեկընի «շատ լաւ բարեկամ»ը եւ ներկայիս Հ.Բ.Ը. Միութեան լաւ բարեկամ մը: Իր խօսքին մէջ դեսպան Ռոճըրզ յարգանք ընծայեց Հ.Բ.Ը.Մ.-ի որպէս կազմակերպութիւն մը որ մարդոց միջեւ միութիւն կը ստեղծէ եւ զանոնք ի մի կը համախմբէ:

Երկիրները չեն որ անպայման բարեկամ են իրարու — ըսաւ դեսպանը,— ժողովուրդներն են որ բարեկամ են, եւ շնորհաւորեց Հ.Բ.Ը.Մ.-ի անդամները որոնց կազմակերպութիւնը դժուարին բիրտ ընկերութեան մէջ «բարեկամութեան ոյժ կու տայ»:

Հիւրերը երկար յամեցան դեսպանատան շքեղ ապարանքին մէջ շրջելով դահլիճէ դահլիճ, վայելելով այդ դահլիճներուն գեղեցկութիւնն ու այնտեղ ներկայացուած արուեստի գործերը:

Դեսպանատունէն ետք հիւրերը ուղղուեցան դէպի Հ.Բ.Ը. Միութեան Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնը ուր պատրաստուած էր վայելուչ ընդունելութիւն մը, արուեստի ցուցահանդէսի մթնոլորտի մը մէջ: Այնտեղ Ֆրանսայի շրջանակի կորովի ատենապետը՝ Տոքթ. Էտուար Ադամեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն, ֆրանսերէն լեզուով, եւ ներկայացուց այն խիտ ու հետաքրքրական յայտագիրը որ յաջորդող քանի մը օրերուն պիտի վայելէին հիւրերը: Հայերէն լեզուով բարի գալուստի խօսքը ըրաւ փոխ-ատենապետ Պրն. Յակոբ Գասարճեան, որ ամէնէն գործօն կազմակերպողներէն մին էր համագումարին:

Դեսպանատան մէջ կազմակերպուած ընդունելութենէն տեսարաններ

ՎԱՐՉԱՊԵՏ ՇԻՐԱՔ

Հինգշաբթի, Նոյեմբեր 20-ին, Փարիզի Քաղաքապետարանի շքեղ դահլիճներուն մէջ Հ.Բ.Ը. Միութեան ի պատիւ տրուած ընդունելութեան, վարչապետ Շիրաք հետեւեալ խօսքերով ողջունեց հայ հիւրերը.—

«Ֆրանսա զուրկ չէ յիշողութենէ» կ'ըսէ վարչապետ Շիրաք

Խորապէս կը հրճուիմ այս երեկոյ ձեզ ընդունելով Քաղաքապետարանի մէջ, Հ.Բ.Ը. Միութեան 80-րդ տարեդարձին առթիւ. ինձի համար այս աւելի եւս ամրապնդելու բարեկամական կապերը, որոնք երկար ատենէ ի վեր կը միացնեն մեր Մայրաքաղաքը եւ Հայ Համայնքը: Ան առիթ մըն է նաեւ յարգանք ընծայելու այն օրինակելի գործունէութեան զոր ցոյց կու տայ ձեր Ընկերակցութիւնը շնորհիւ ուժականութեանը, կորովին եւ անընկճելի զոհողութեանը իր ղեկավարներուն, ձեր Ընդհանուր նախագահին՝ Պրն. Ալեք Մանուկեանի ինչպէս նաեւ Ֆրանսայի Շրջանային Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Էտուար Ադամեանի, որոնք սրտագին կ'ողջունեմ:

Պիտի ուզէի նմանապէս ողջունել Շարլ Ազնաւուրը, որ ուզեց իր մասնակցութիւնը բերել այս երեկոյթին, եւ որ իր ներկայութեամբ մեզի մեծ հաճոյք պատճառեց:

Մօտաւոր անցեալին պատիւը ունեցած եմ հոս երկիցս ընդունելու Նորին Սրբութիւն Վազգէն Ա. Կաթողիկոսը, ինչպէս նաեւ Կաթողիկոս-Պատրիարքը՝ Արհիպատիւ Յովհաննէս-Պօղոս Բ. Գասպարեանը: Անոնց ըսի, ինչպէս որ այս երեկոյ ձեզի կ'ըսեմ, որ Ֆրանսան պատիւ կը զգար իր հողին վրայ հաշուելու Արեւմտեան Եւրոպայի ամէնէն կարեւոր Հայ Համայնքը: Անոնց ըսի նաեւ, որ մեր երկիրը յիշողութենէ զուրկ չէր...

Ֆրանսան կը յիշէ, արդարեւ, որ սակաւաթիւ ժողովուրդներ այնքան ծանր կերպով պատմութեան հարուածը կրած են, իրենց մորթին, ինքնութեան եւ աւանդութիւններուն վրայ, խոցեր ստանալով անոնցմէ: Այսուհանդերձ, հայերը, հակառակ այդ ողբերգութեանց, որոնց ընդմէջէն անցած են, փորձութեամբ ջրդեղուած քաջութեամբ մը Ֆրանսայի եւ ռամկապետութեան կողքին գտնուեցան նախ Առաջին ու ապա Երկրորդ Աշխարհամարտին: Ոչ ոք պիտի կրնար մոռնալ որ հայերը, 1916-էն սկսեալ զինուորագրուեցան Արեւելեան Լեգէոնի մէջ, ուր փառաւորեցին իրենց անունը. ուրիշ հայեր, 1914-էն սկսեալ կռուեցան Արթուայի, Շամբանների, Սոմի մէջ եւ ապա՝ Վէրտէօնի ճակատին վրայ: Ոչ ոք պիտի կրնար մոռնալ Արեւելեան Լեգէոնի գումարտակները որոնք մաս կազմեցին Պաղեստինի եւ Սուրիոյ յաղթանակներուն, եւ այնքան յօժարակամ զոհողութիւնները յանուն արդարութեան եւ իտէալի, վերջին պատերազմի ընթացքին: Հայերը կը գտնուէին Պիր Հաքիմի, Էլ-Ալամէյնի, Հնդկաչինի կռիւներուն եւ Հիւսիսային Ափրիկէի մէջ:

Այս բոլորով կ'ուզենք արտայայտել այն երախտագիտութիւնը զոր կը պարտինք հայ համայնքին:

Ըսել կ'ուզենք որքան կարեւոր է որ ձեր համայնքը կարենայ պահել իր առանձնայատկութիւնը — իր հաւատքը, իր լեզուն, հայրենասիրութիւնը, եւ անշուշտ, արդար հպարտութիւնը իր անցեալին:

Ուրեմն, արդարութիւն մըն է պարզապէս որ այս երկիրը, որ ձերն է, զոր ձեր հայրերը ընտրեցին եւ սիրեցին, որ ոչ միայն յարգանք ընծայէ ձեր մեռեալներուն — որոնք ի՛րն են նաեւ — յիշատակին, այլ նաեւ ողջունէ, քաջալերէ եւ զօրավիգ կանգնի ամէն մարմնի որ կը ծառայէ հայերուն:

Այս ոգիէն է որ կը բխի մեր հանդիպումը, եւ այս պատճառով է որ անգամ մը եւս կ'ուզեմ յայտնել այն կարեւորութիւնը որ իմ աչքին ունի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Ամէն ոք տեղեակ է հայ համայնքին համար Միութեան ղեկավարներուն եւ անդամներուն պատրաստակամութիւնը՝ զոհողութեան եւ առատաձեռնութեան համար:

Պիտի ուզէի որ անոնք ընդունին յարգանքը, զոր այսօր Փարիզ իրենց կ'ընծայէ, ի նշան այն կապին զոր կը միացնէ Հայ Համայնքը եւ Ֆրանսան, հիմնուած՝ երկար ուղեկցութեան մը վրայ՝ մեզի հասարակաց արժէքներու պաշտպանութեան — ազատութեան, մարդկային արժանապատուութեան, անցեալի հաւատարմութեան եւ միեւնոյն կամքը՝ ապագան կերտելու:

Արուեստի, պատմական ապրումներու եւ ակնախտիտ վայելչութեան մթնոլորտ մը ստեղծուեցաւ Փարիզի պալատանման քաղաքապետարանին մէջ, մինչ Ազնաւուրի այրող ձայնը կը սաւառնէր ներկայ գտնուող կամարներու տակ, հայոց կիզիչ ցաւը բարեխառնելով բիւրեղեայ ջահերէն ծորող յորդ լոյսերուն:

Պետական վայելչութեամբ ճաշկերոյթ-ընդունելութիւն մըն էր, որուն ներկայ գտնուեցան 620 հրաւիրեալներ. անոնք բաժնուեցան անմոռանալի յիշատակներով: Ներկայ էին պետական անձնաւորութիւններ եւ ֆրանսահայ երեւելիներ, ինչպէս ֆիլմարտադրիչ Անրի Վերնէօյ (Աշոտ Մալաքեան), խաւեարի արքայ Պետրոսեան եւ ուրիշներ (աշխարհահռչակ նկարիչ եւ ակադեմական Գառզու, իր անհանգստութեան պատճառով չէր կրցած ներկայ գտնուիլ):

Հինգշաբթի, 20 Նոյեմբերի երեկոյեան վարչապետ եւ Փարիզի քաղաքապետ Ժաք Շիրաքի հրաւէրով ընդունելութիւն մը տեղի ունեցաւ քաղաքապետարանի պալատանման պերճաշուք սրահներուն մէջ:

Ընդունելութեան սկիզբը տեղի ունեցաւ մէկ ժամէն աւելի տեւողութեամբ մասնաւոր համերգ մը Շարլ Ազնաւուրի կողմէ, ի ներկայութեան Տէր եւ Տիկին Ժաք Շիրաքի, պետական պաշտօնական հիւրերու եւ Միութեան պատգամաւորներու:

Ազնաւուր ներկայացուց հին եւ նոր երգերէ կազմուած ընտրովի փունջ մը, որուն ամէնէն խորհրդանշական արտայայտութիւնը հանդիսացաւ Հայկական Ցեղասպանութեան նուիրուած «Անոնք Ինկան» երգը:

Համերգի աւարտին, Տէր եւ Տիկին Ժաք Շիրաք իւրաքանչիւր հիւրի առանձնապէս բարի գալուստ մաղթեցին:

Ճաշկերոյթէն ետք, Պրն. Շիրաք արտասանեց բարի գալուստի ուղերձ մը, շեշտը դնելով Ֆրանսայի եւ հայերու միջեւ հաստատուած երկարամեայ ամուր կապերուն վրայ, սկսեալ Ա. Աշխարհամարտէն (ուղերձին թարգմանութիւնը կու տանք առանձին):

Հ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Էտուար Ադամեան խօսք առնելով նախ շնորհակալութիւն յայտնեց Տէր եւ Տիկ. Շիրաքներուն, իրենց հիւրընկալութեան համար եւ ապա ներկայացուց Տիար Ալեք Մանուկեանը:

Ապա Միութեան ցկեանս նախագահ Պրն. Ա. Մանուկեան հանդէս եկաւ շնորհակալութեան պատասխան ճառով մը: Ըսելէ ետք թէ այդ ընդունելութիւնը մասնաւոր նշանակութիւն մը ունի Հ.Բ.Ը.Մ.-ի եւ ֆրանսահայ համայնքին համար, Պրն. Մանուկեան նշեց որ շուրջ երկու տաս-

Ձախին՝ Վարչապետ Ժաք Շիրաք, Տիկին Լուիզ Սիմոն (ՀԲԸՄ-ի կեդր. վարչութեան փոխ նախագահ) կ'ունկնդրեն նախագահ Մանուկեանը

ՀԲԸՄ-ի հրաւիրեալներէն խումբ մը

ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԷ Հ.Բ.Ը.Մ.-Ի ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

նամեակ Փարիզ ծառայած էր որպէս Միութեան կեդրոն եւ թէ Միութեան հիմնադիրը՝ Պօղոս Նուպար Փաշա, ինչպէս նաեւ Գալուստ Կիւլպէնկեան ֆրանսացի ժողովուրդին եւ կառավարութեան մօտ գտած էին հասարակաց կապ մը — հաւասարութեան եւ ազատութեան տենչը: Այսօր 300,000 ֆրանսահայեր հպարտ քաղաքացիներն են այս մեծ երկրին եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն ֆրանսական ընկերութեան բարգաւաճման:

«Պատմութիւնը կարեւոր բաժին մը ունեցաւ մեր երկու երկիրներու ճակատագիրը միացնելով — աւելցուց Պրն. Մանուկեան: Երկար դարեր հայերը յառաջապահ եղան արեւմտեան, ի մասնաւորի ֆրանսական արժէքներուն: Խաչակիրները որպէս իրենց բնական դաշնակից գտան հայերը: Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն Զ. ապաստան գտաւ Ֆրանսա եւ իր դամբարանը կը գտնուի այստեղ՝ այս ասպնջական հողին վրայ: Աւելի արդի ժամանակներուն հայ մտաւորականները իրենց ներշնչումը ստացան Ֆրանսայէն: Հայ ժամանակակից երաժշտութեան հիմնադիր Կոմիտաս Վարդապետ իր կեանքին վերջին շրջանը ապրեցաւ Ֆրանսայի մէջ: Բանաստեղծներ՝ ինչպէս Թէքէեան, Չօպանեան եւ Արմէն Լիւպէն իրենց գեղեցկագոյն էջերը գրեցին Ֆրանսայի մէջ:

Հոս կը գտնուի նաեւ Նուպարեան Մատենադարանը, ուր կը պահուի հայ գրականութեան եւ պատմական վաւերաթուղթերու ամէնէն ճոխ հաւաքածոներէն մին: Համալսարանական Ուսանին Մարի Նուպար Տաղաւարը որպէս դա ր պաս ծառայած է բազմաթիւ հայերու համար:

Ֆրանսական բարձր մշակոյթը, շարունակեց Պրն. Մանուկեան, սնունդ տուաւ ամէնէն համբաւաւոր ֆրանսահայերուն — Շարլ Ազնաւուր մեր միջնադարեան գուսանական երգը բերաւ 20-րդ դարու բեմին վրայ: Ֆրանսական գեղարուեստից կաճառի անդամ Գառզու — Գառնիկ Զուլումեան — արտայայտեց հայկական տրտմութիւնը եւ կարօտաբաղձութիւնը ամէնէն նրբարուեստ ձեւով: Ֆիլմարտադրիչ Անրի Վերնէօյ, իր վերջին «Մայրիկ» ինքնակենսագրական հատորով կենդանի դարձուց Ֆրանսա հասած հայ գաղթականները:

Զերդ վսեմութիւն, եզրափակեց Պրն. Մանուկեան, ինծի անծանօթ է թէ ֆրանսերէնով ի՞նչ կը նշանակէ Շիրաք բառը, սակայն հայերուս համար ան կը ներկայացնէ Հայաստանի ամէնէն բեղմնաւատ շրջանը եւ կը խորհրդանշէ բարգաւաճութիւն: Եւ «Նոյն բարգաւաճութիւնը եւ յառաջդիմութիւնը կը մաղթեմ ֆրանսացի ժողովուրդին վարչապետ Շիրաքի առաջնորդութեամբ»:

Զախէն աջ՝ Կարլեն Դալլաքեան, Տոքթ. եւ Տիկ. Տիգրան Ալեքսանեան, Հանրի Վերնէօյ, եւ Տէր եւ Տիկ. Երուանդ Ազատեան

Շարլ Ազնաւուր եւ Ա. Ներկիզեան



Փարիզի քաղաքապետարանին մէջ կայացած ընդունելութեան Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Էտ. Ադամեան հետեւեալ ճառը արտասանեց.

Երախտիքի խօսք՝ Տոքթ. Էտուար Ադամեանի կողմէ

Պրն. Վարչապետ, Պրն. Քաղաքապետ, Տիկին Շիրաք,

Շնորհակալութիւններս եւ երախտագիտութիւնս կ'ուղղուին ոչ միայն մեր Մայրաքաղաքի քաղաքապետին, այլ Ձեր արտօնութեամբ, ամէնէն առաջ Տիկ. Շիրաքին, առանց որուն այս երեկոյթը պիտի չունենար այդքան փայլ եւ յաջողութիւն:

Ձեր քաջութիւնը եւ վճռականութիւնը, Պրն. Վարչապետ, լաւածանօթ են: Ձեր հրաւէրը, այս իրիկուն, մեր բոլորին համար վճռական վկայութիւնն են անոնց: Ձեր այս քայլերով, մեր համայնքին հանդէպ կը յայտնէք վստահութիւն մը եւ յարգանք մը, որոնց համար շնորհակալ ենք:

Իրողապէս, Հ.Բ.Ը. Միութիւնը, Պրն. Վարչապետ, չ'ընդունիր բռնարարքը որպէս գործունէութեան միջոց ծառայելու դատի մը, որուն մենք խորապէս կապուած ենք:

Առանց երթալու մինչեւ Խաչակիրներու շրջանը, պէտք է յիշել որ Ֆրանսան գտնուեցաւ առաջին կարգին այն երկիրներուն, որոնք իրենց մէջ ընդունեցին 20-րդ դարու Ա. Ցեղասպանութեան վերապրողները: Իրենց կողմէ հայերը, ի մասնաւորի Ֆրանսայի հայերը, երկու մեծ աշխարհամարտերու ընթացքին պաշտպանեցին իրենց երկրորդ հայրենիքը եւ մասնակցեցան ազատագրութեան պայքարին:

Սակայն ֆրանսացիներու եւ հայերու միջեւ եղբայրակցութիւնը միայն արեան եղբայրակցութիւն չէ:

Աշխարհի ամէնէն հին քրիստոնեայ ազգը իր նպաստը բերաւ համաշխարհային մշակոյթին. ասոր փոխարէն, ան անվիճելիօրէն դրոշմուեցաւ ֆրանսական ազդեցութեամբ.

—Մարդկային Իրաւանց եւ Քաղաքացիին Յայտարարութիւնը արդարեւ յոյս տուաւ ճնշուած հայուն եւ դարձաւ Հայկական Վերածնունդին որոշիչ ազդակներէն մին: Եւ շատ բնական կերպով է որ օտար գրականութենէ կատարուած առաջին թարգմանութիւնները Վիգթոր Հիւկոյի եւ Լամարթինի գործերն էին:

—Փարիզի Միջազգային Համալսարանի Ուսանին մէջ է որ մեր Հիմնադիր նախագահը, Ն. Վ. Պօղոս Նուպար Փաշա, Էքոլ Սանթրալի ուսանող, նուիրեց Մարի Նուպար Տաղաւարը, ուր Հայաստանի ներկայութիւնը կը յաւերժանայ:

—Վերջապէս, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը չի կրնար մոռնալ որ ֆրանսական հողին վրայ արտօնուած առաջին օտար դպրոցը հայկական դպրոց մըն էր — Ղենսիի մէջ Երիտասարդուհիներու դպրոցը, որ մէկն է այն 70 դպրոցներէն զորս մեր Միութիւնը կը ֆինանսաւորէ:

Արդարեւ, մեր լեզուին ուսուցումը եւ մեր մշակոյթին պահպանումը մեր կազմակերպութեան գլխաւոր նպատակներէն մէկն է:

Ֆրանսայի հայերը շնորհակալութիւն կը յայտնեն կառավարութեան որ հայերէնը ընդունեց պաքալորէայի քննութեանց ծրագրին մէջ որպէս կենդանի լեզու: Ասկէ ետք մեր համայնքին կը պատկանի ամէն ինչ ի գործ դնել որպէսզի այս օրէնքը իր պտուղները տայ:

Զուգահեռաբար մեր Միութիւնը պատրաստ է նպաստելու հայերէն լեզուի դասընթացքներու Փարիզի, Լիոնի, Մարսէյլի մէկ կամ բազմաթիւ լիսէներու մէջ որ դպրոցներու տեսչութիւնները ի վիճակի ըլլան նման ուսումնական ծրագիր մը կազմակերպելու:

Սակայն հայերէն լեզուն պէտք չէ որ կենդանի ըլլայ միայն հայերուն համար. հայ մշակոյթը պէտք չէ որ սահմանեալ ըլլայ: Այս պատճառով մեր բոլոր ուժերը պիտի տրամադրենք ծրագիրի մը որ մեզի սիրելի է — Հայկական Հիմնարկի մը ստեղծումը, որուն նպատակը ըլլայ ոչ միայն պահպանել մեր ինքնութիւնը, այլ մեր մշակոյթի էութիւնը ներկայացնել ֆրանսացի ժողովուրդին: Այս ճառագայթումը, զոր միայն Փարիզը կրնայ իրագործել՝ աշխարհի վրայ գրաւած իր դիրքին բերումով, պիտի հարստացնէ հայերը ու ֆրանսացիները հաւասարապէս: Ան պիտի սատարէ երիտասարդներու փոխադարձ հասկացողութեան:



«ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ»
Ջրաներկար՝ Նորիկեանի:
Պօղոս Նուպար Փաշա,
Գալուստ Կիւլպէնկեան,
Զարեհ Պէյ Նուպար
Արշակ Գարակէօզեան եւ
Ալեք Մանուկեան

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 80-ամեակին նուիրուած Ֆրանսայի հանդիսութիւնները սկսան Շաբաթ, 19 Նոյ. 1986-ի երեկոյեան ժամը 8:00-ին Փարիզի Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ, ուր բացուած նկարչական ցուցահանդէսին զուգահեռ քոքթէյլ-ընդունելութիւն մը կազմակերպուած էր սոյն հանդիսութիւններուն առիթով աշխարհի չորս ծագերէն ժամանած հիւրերուն ի պատիւ:

Սակայն դարձեալ ի պատիւ կազմակերպիչներուն պէտք է ընդգծել որ ամէն անհրաժեշտ բան կատարուած էր որպէսզի ընդունելութիւնը տեղի ունենար պատշաճ մակարդակի վրայ եւ ներկաները առաջին իսկ մէկ պահէն ներգրաւէր քաղաքս ժամանած հիւրերը, որոնք տօնական մթնոլորտին հեւքը զգացած էին արդէն:

Հ.Բ.Ը. Միութեան Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի գանձապահ Պրն. Լեւոն Քեպապճեանի ներկաներուն ուղղած բարի գալուստի խօսքերէն ետք խօսքը կը տրուի նոյն յանձնաժողովի նախագահ Տոքթ. Էտուար Ադամեանին որ ֆրանսերէն լեզուով կը ներկայացնէ հանդիսութիւններու յայտագիրը շեշտելով այդ ուղղութեամբ տարուած աշխատանքներու բարեյաջող ընթացքը եւ յաճախ ակնկալութիւնները գերազանցող խրախուսիչ երեւոյթները որոնք գոհունակութիւն պատճառելու հետ մէկտեղ կը հանդիսանային գլխաւոր երաշխիքը արդէն իսկ ընթացքի մէջ եղող հանդիսութիւններու յայտագրի իրականացմանը:

Համարեա նոյն բովանդակութեամբ բայց այս անգամ հայերէնով ելոյթ ունեցաւ յանձնաժողովի քարտուղար Պրն. Յակոբ Գասարճեան որմէ ետք ասպարէզը տրամադրուեցաւ հրաւիրեալներուն:

Ընդունելութիւն՝ Մանուկեան Կեդրոնին մէջ եւ ցուցահանդէսի բացում

Իսկապէս որ ե՛ւ յուզիչ, ե՛ւ խրախուսիչ էր երեկոյի ստեղծած մթնոլորտը: Արդարեւ կարծես մոգական գաւազանի հարուածով մը իրարու քով եկած էին արժանթինահայը եւ լիբանանահայը, աւստրալահայն ու լոնտոնահայը, ամերիկահայն ու իտալահայը, յունահայն ու գանատահայը եւ այսպէս, սփիւռքի 19 զանազան հայկական գաղութներէ ժամանած հայեր որոնք Հ.Բ.Ը.Մ.-ի շունչով սնած եւ դաստիարակուած, մէկտեղուած էին այստեղ ոչ միայն իրենց յարգանքի եւ երախտագիտութեան բաժինը բերելու հայկական այս մեծ մարդասիրական միութեան 80-ամեայ յոբելեանին այլեւ գօտեպնդելու զիրար եւ վերանորոգելու իրենց ուխտը այսուհետեւ եւս հաւատարիմ մնալու անոր սկզբունքներուն եւ մանաւանդ անոր սրբազան կարգախօսին՝ — ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է: Որեւէ ժամանակէ աւելի սփիւռքահայութիւնը կարիքը ունի այսօր այս կարգախօսին եւ յաղթահարելու համար իր ճանապարհին օր ըստ օրէ աւելցող խոչընդոտները եւ այդ իմաստով մի՞թէ ինքնին խորհրդանշական չէ երեկոյի պարզած պատկերը, երբ Հ.Բ.Ը. Միութեան մեծ ընտանիքի անդամները, թեկուզ ժամանակաւորապէս միացած՝ իրենց հարազատ օճախներէն մէկուն՝ Փարիզի Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ, փոխադարձ համագործակցութեամբ միշտ վառ կը պահեն Հ.Բ.Ը.Մ.-ի բոլոր օճախները սփիւռքի չորս ծագերուն, մինչեւ ողջ հայութեան մէկտեղումը իր հայրենիքին մէջ:

Միջազգային Համբաւի Տէր Արուեստագէտներու Ցքեղ Համերգ



Զախէն աջ՝ Ռաֆֆի Պետրոսեան, Այտա Մուրատեան, Քոսիմա Ժուպէր եւ Անի Պետրոսեան

Ամէն ինչ մտածուած էր որպէսզի համերգը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 21 Նոյեմբերի երեկոյեան Սալ Կաւոյի մէջ, դառնար երաժշտական փառատօն մը, ընդհանրապէս, եւ ի մասնաւորի հայ երաժշտութեան մէկ պանծացումը՝ իր ձայնային եւ նուագարանային արտայայտած միջոցներով:

Համերգը նուիրուած էր յիշատակին Սարգիս եւ Աստղիկ Քիւրքճեաններու (Լոնտոն) եւ Մկրտիչ Մանսուրեանի (Եգիպտոս): Ներկայ գտնուեցան հազար անձեր:

Մարսէյլի Սահակ-Մեսրոպ երգչախումբը, ղեկավարութեամբ Խաչիկ Եղլմազեանի բացումը կատարեց յայտագրին, որ բաղկացած էր Կոմիտասի, Կարա Մուրզայի եւ Եկմալեանի երգերէն:

Ժամանակակից հայ մեծագոյն ջութակահարներէն Ժան Տէր-Մերկերեան մեկնաբանեց Սէն Սանսի *Ռոնտո Գաբրիսիսոն* ամբողջովին երիտասարդ երաժիշտներէ կազմուած «Ժէօն Հարմոնի» նուագախումբին մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ Ժան-Ժագ Վերնէրի: Տէր-Մերկերեան, ինչպէս միշտ, ցոյց տուաւ աքանչելի թէքնիք մը՝ ի սպաս խոր երաժշտականութեան:

Սփիւռքի մեր ամէնէն տաղանդաւոր եւ բազմաթիւ մրցանակներու դափնեկիր տաւիղահար Սիւզաննա Միլիտոնեան նուագեց, վերոյիշեալ նուագախումբի ընկերակցութեամբ, որքան նուրբ նոյնքան հաստատ նուագածութեամբ Տէպիւսիի «Սրբազան եւ Հեթանոս Պարեր»ը:

Տէր եւ Տիկին հանրածանօթ դաշնակահարներ՝ Ռաֆֆի եւ Անի Պետրոսեանները մեկնաբանեցին Պապաճանեան-Յարութիւնեան «Հայկական Ռաբսոտի»ն, որ այլեւս մաս կը կազմէ դասական երաժշտութեան:

Պետրոսեան զոյգը երկար ճանապարհ կտրած էր հայ երաժշտութիւնը արժանաւորապէս ծանօթացնելու իր առաքելութեան մէջ:

Նախկին պարսկահայ երգահան — այժմ լոնտոնարնակ — Լորիս Ճգնաւորեանի երիտասարդական շրջանի մէկ յատկանշական ստեղծագործութիւնը՝ «Ֆանթասթիք Պալէ»ն, գրուած երեք դաշնակի եւ հարուածային նուագարանի համար, իր կշռոյթով, մեղեդիով իր թափին մէջ պահեց սրանը: Դաշնակահարուհիներն էին Անի Պետրոսեան, Այտա Մուրատեան եւ Գոզիմա Ժուպէր ղեկավարութեամբ Ռաֆֆի Պետրոսեանի: Հայկական կարգ մը մեղեդիներու ընդմէջէն կեանքի սրբազան եւ հեթանոս մէկ փառաբանանքն է որ հրամցուեցաւ ունկնդիրներուն:

Մոցարթի աքանչելի մէկ ստեղծագործութիւնը գրուած երկու ջութակի եւ նուագախումբի համար — մեկնաբանուեցան ամերիկահայ ծանօթ ջութակահար քոյրեր՝ Անի Գավաֆեանի եւ Այտա Գավաֆեանի (Ալթօ) կողմէ, ընկերակցութեամբ նուագախումբին: Արուեստագէտ քոյրերը այս անգամ Փարիզի մէջ վկայեցին իրենց տաղանդի մասին ոչ միայն որպէս առաջնակարգ մենակատարողներ, այլ նաեւ ընկերակիցներ որոնք իրարու հետ երկխօսութիւն մը, եւ նուագախումբին հետ ընդհանուր ներդաշնակ զրոյց մը կ'ունենան: Գավաֆեան քոյրերուն մասնակցութիւնը 80-ամեակի այս տօնակատարութեանց գեղարուեստական բաժինին կու տար նաեւ խորհրդանշական իմաստ մը Հ.Բ.Ը.Մ.-ի 80-ամեակի համազգային բնոյթին:

Երաժշտասէրին համար ուրիշ նորութիւն մըն էր հայրենի երգահան Ալ. Յարութիւնեանի փողի քոնչէրթոն նուագախումբի ընկերակցութեամբ: Մենակատարն էր Պեռնար Սուսթրօ:

Ա. Յարութիւնեանի խորքը որքան հայկական ըլլայ, ան երբեք չի կրկներ հայկական ֆոլքլորը: Կամ որքան ալ տոհմիկ եղանակէ մը ծնունդ առած ըլլայ, իր գործը կը դառնայ երաժշտական միջազգային կալուածին պատկանող ստեղծագործութիւն մը: Այս իրողութեան մէկ պայծառ արտայայտութիւնն էր «Փողի եւ նուագախումբի համար Քոնչերթօ»ն:

Այս բազմերես եւ այդքան ճոխ յայտագիրը որուն ներկայացումը երբեք չզգացուց պահանջուած ժամանակը, իր աւարտը գտաւ Արամ Խաչատուրեանի «Մեծ Պաքքանալ»ով, «Սփարթաքիւս» Պալէէն:

Երբ վերջաւորութեան ժողովուրդը խելայեղ ծափերով իր գնահատանքը կը յայտնէր բեմի վրայ վերստին երեւցած յայտագրին իրենց մասնակցութիւնը բերած բոլոր արուեստագէտներու հաւաքական ներկայութեան, նոյնքան այդ ծափերուն արժանի նկատեց երաժշտական յայտագրին գլխաւոր պատասխանատու Պրն. Գրիգոր Համբարձումեանը, որուն երաժշտական ճաշակին, հմտութեան եւ փորձառութեան մէկ գեղեցիկ վկայութիւնն էր ներկայացուած յայտագիրը:

Անի եւ Այտա Գավաֆեան (Նիւ Եորք), ջութակահար քոյրեր

Սահակ Մեսրոպ Երգչախումբը (Մարսէյ)

Երաժշտական կատարողները համերգի աւարտին

Հիացած ունկնդիրներ

Համագաղութային Խորհրդակցական Համաժողովը Համակողմանի Կերպով կը քննարկէ Բարեգործականի եւ Հայ Սփիւռքի Հարցերը

Համաձայն Հ.Բ.Ը. Միութեան Կանոնագրին, Միութիւնը քանի մը տարին անգամ մը կը կազմակերպէ համագաղութային խորհրդակցական համաժողով մը՝ ի մի հաւաքելով բոլոր շրջանակներու ղեկավարները: Թէեւ Ժողովը իրաւասու չէ որոշումներ կայացնելու, սակայն այնտեղ կատարուած խորհրդակցութիւններն ու գոյացած եզրակացութիւնները լրջօրէն նկատի կ'առնուին Կեդրոնական Վարչական Ժողովին կողմէ, յաջորդող տարիներուն: Բարեգործականի 73-րդ տարեկան համագումարին զուգադիպող այս հաւաքին կը մասնակցէին 120-է աւելի ներկայացուցիչներ՝ աշխարհի տարբեր անկիւններէն. հետաքրքրական էր իմանալ Աւստրալիոյ թէ Արժանթինի, Մ. Նահանգներու թէ Ֆրանսայի ներկայացուցիչներուն խորհրդածութիւնները, որոնք գրեթէ միեւնոյն մտահոգութիւններն ու առաջադրութիւնները կը պարզէին հայութեան համար:

Հինգշաբթի, Նոյ. 20 եւ Ուրբաթ, Նոյ. 21, Միութեան Ա. Մանուկեան Կեդրոնին մէջ մասնակցութեամբ 19 երկիրներէ ժամանած պատգամաւորներու, տեղի ունեցաւ Հ.Բ.Ը. Միութեան Համագաղութային Խորհրդակցական Համաժողովը: Համաժողովը համակարգեց Կեդրոնական Վարչութեան ատենադպիր մեթր Պերճ Սեդրակեան: Ատենավարն էր՝ Կեդր. Վարչ. Ժողովի անդամ՝ Պրն. Հայկաշէն Ուզունեան: Ժողովին բոլոր նիստերուն ներկայ էր ցըկեանս նախագահ Տիար Ալէք Մանուկեան որ իր ներածական խօսքով, ժամը 9-ին, բացուած յայտարարեց Համաժողովը:

Պրն. Հայկաշէն Ուզունեան պատմական ակնարկ մը նետեց սփիւռքի կազմաւորման վրայ եւ ընդգծեց Բարեգործականի դերը այդ գաղութներու կազմութեան մէջ: Ան շեշտեց Միութեան դիմաց պարզուած նոր հրամայականները եւ լուծում պահանջող հարցերը:

Հինգ տարբեր շրջանակներու ներկայացուցիչներ խօսք առին. «ՀԱՅ ՍՓԻՒՌՔԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԴԻՄԱՑ» նիւթին շուրջ: Պրն. Վարդգէս Պալեան, Միութեան Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովի ատենապետը, խօսեցաւ Բարեգործականի Ամերիկայի շրջանակին մասին անդրադառնալով անոր գործունէութեան — երիտասարդական, գեղարուեստական, ճամբար, ընկերային օժանդակութիւն, նախագահներու Շրջանակ-Փրեզիտընց Քլլաբ—: Պրն. Պալեան շեշտեց մնայուն հանգանակութեան կարեւորութիւնը:

Պրն. Յովսէփ Եուսէֆեան տուաւ ընդնախագահ-գանձապահ Պրն. Նազար Նազարեանի եւ հաշուապահ Պրն. Պետրոս հանուր պատկերը Միութեան Հարաւ-Ամերիկայի մասնաճիւղերուն:

Պրն. Էօժէն Բաբազեան ներկայացուց Միութեան գործունէութեան համապատկերը Եւրոպայի մէջ: Ան կոչ ուղղեց, որ Միութեան Եւրոպայի շրջանակը ինքնաբաւ դառնայ:

Պրն. Սեդրակ Գասարճեան ներկայացուց Միջին Արեւելքի կացութիւնը: Ան կեդրոնացաւ Լիբանանի 12 տարիներու պատերազմի հետեւանքներուն վրայ եւ համեմատութիւններով ցոյց տուաւ թէ Միութեան պիտճէի բացին պատճառը Լիբանանը չէր:

Պրն. Զաւէն Զէյէնեան, ատենապետը Սիտնիի Մասնաժողովին, խօսեցաւ Աւստրալիոյ հայ գաղութին մասին, կեդրոնալով Միութեան առաքելութեան վրայ:

Ապա ներկայացուեցաւ հաշուական վիճակը Կեդր. Վարչական Ժողովի փոխ Փիանտարեանի կողմէ:

Պրն. Նազարեան տուաւ պատճառները Միութեան եկամուտներու նուազումին — տոկոսներու անկում եւ տոլարի արժէքազրկում:

Պրն. Փիանտարեան կոչ ըրաւ պատգամաւորներուն որ մասնաճիւղերը ոչ միայն ինքնաբաւ դառնային այլ սատարէին կեդրոնին:

Յաջորդեց հարց-պատասխանի շրջան մը: Նախագահ Մանուկեան, Պրն. Նազարեան եւ Պրն. Ուզունեան հայթայթեցին անհրաժեշտ տուեալներն ու պատասխանները: Պատգամաւորները, որպէս գործնական առաջարկ, համաձայնեցան «Նախագահներու Խումբ»ին անդամներ արձանագրել իրենց մասնաճիւղերուն մէջ, գանձելով տարեկան 1000 տոլար իւրաքանչիւր անդամէ: Խոստումներու գումարը հասաւ 300-ի:

Յաջորդ նիստը նուիրուած էր երիտասարդական շարժումներուն: Պրն. Պերճ Թերզեան՝ Եգիպտոսի Շրջ. Յանձնաժողովի փոխ ատենապետը տուաւ պատմականը Հ.Ե.Ը.-ի: Ան վերլուծեց մեր երիտասարդներու վրայ ճնշող այսօրուան ազդակները:

Պրն. Օշին Մոստիչեան՝ Սան Փաւլոյի Հ.Բ.Ը. Միութեան ատենադպիրը, յայտնեց թէ Միութեան Հարաւ-Ամերիկայի շրջանակները երիտասարդական խումբեր կ'ուղարկեն Հայրենիք ուր անոնք կը թրծուին ազգային ոգիով եւ իրենց վերադարձին գործօն դեր կը վերցնեն «Արմենիկ» երիտասարդական շարժումին մէջ:

Տիկ. Սեսիլ Քեշիշեան զեկուցեց Ամերիկայի երիտասարդական շարժումին մասին: Ան առաջարկեց հիմնովին բարելաւել Միութեան երիտասարդական շարժումը — ճամբարի բարելաւում, սկաուտական շարժումի վերակազմակերպում, վիտէօ ֆիլմեր Միութեան մասին եւ խմբային այցելութիւններ Հայաստան: Պրն. Սամուէլ Իլանճեան խօսեցաւ Լիբանանի շրջանակի մասին: Հակառակ Լիբանանի տխուր պայմաններուն — Հ.Ե.Ը. կ'ապրէր եւ խանդա-

Աւստրալիոյ ներկայացուցիչները. ձախէն՝ Զաւէն Զէյէնեան, Սահակ Պոյաճեան եւ Գէորգ Պոզաճեան

Համաժողովէն մասնակիցներ

Նախագահ Մանուկեան, Յակոբ Գասարճեան (ձախին) եւ Տիկ. Անահիտ Սապպաղ

Կեդրոնական Վարչութեան անդամ Հայկաշէն Ուզունեան կը համադրէ Համաժողովի աշխատանքները



Աջի նկարը՝ Խաչիկ Խաչիկով (Պելճիքա) որ 10,000 տոլար նուիրեց Միութեան, համաժողովի առիթով

Ֆրանսայի ներկայացուցիչներ. ձախէն աջ՝ Միշէլ Սապպաղ, Լեւոն Քէպապճեան, Միշէլ Բազումեան, Յակոբ Գասարճեան, ետին՝ Կարպիս Եսայեան (Անգլիա)

վառութեամբ կը նշէր իր հիմնադրութեան 55-ամեակը:

Նախագահ Մանուկեան եզրափակելով խորհրդակցութիւնները ըսաւ թէ Միութիւնը տարեկան 3-400,000 տոլար կը ծախսէր երիտասարդական ծրագիրներու համար: Ան ըսաւ թէ մի քանի ծրագիրներ չէին իրագործուած որովհետեւ թէ նիւթականի եւ թէ գործօն անձերու պակասը ունինք:

Նիստերը շարունակուեցան յաջորդ օրը, Նոյեմբեր 21-ին: Այդ օրուան առաջին նիստին Միութեան կրթական առաքելութեան մասին զեկուցեց Կեդրոնականի անդամ եւ կրթական Կեդր. Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Բերկրունի Սվաճեան առարկայական ակնարկ մը նետելով Միութեան Կրթական Յանձնաժողովի ընդհանուր աշխատանքներուն մասին, շեշտելով կրթական մարզին կենսական դերը Միութեան ընդհանուր աշխատանքներուն ծիրէն ներս եւ որակաւոր ուսուցիչներու անհրաժեշտութիւնը:

Տոքթ. Արշաւիր Կէօնճեան, անդամ Կեդր. Վարչ. Ժողովի, ընդհանուր ակնարկ մը նետեց Միութեան Հիւս. Ամերիկայի 5 վարժարաններուն վրայ, բաղդատելով զանոնք ամերիկեան եւ քանատական վարժարաններու հետ: Միութեան Լիբանանի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի բազմավաստակ տնօրէն Պրն. Արա Թոփճեան զեկուցեց Միջին Արեւելքի մեր վարժարաններուն մասին շեշտելով ներկայ վիճակը Լիբանանի մեր դպրոցներուն: Հակառակ իրարայաջորդ 12 տարիներու տագնապին Լիբանանը կը շարունակէր մնալ եւ տեւել: Պրն. Թոփճեան առաջարկեց աւելի բարձրացնել մեր ուսումնական աշխատանքներու մակարդակը եւ կատարեց շատ մը շինիչ եւ գործնական առաջարկներ:

Միութեան Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի ատենապետը՝ Պրն. Երուանդ Ազատեան ներկայացուց Բարեգործականի մշակութային առաքելութիւնը, անոր անցեալի իրագործումներով եւ ապագայի առաջադրութիւններով. ան իր զեկոյցով կու տար այդ մշակութային առաքելութեան երեք երեսները.— պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ ու հրատարակութիւններ, ստեղծագործական արուեստներ եւ կատարողական արուեստներ: Այս բոլոր մարզերուն մէջ — եզրակացուց զեկուցողը — Միութիւնը իրագործած է պատկառելի աշխատանքներ ու կը շարունակէ ներկայիս ընթանալ դէպի առաւել տպաւորիչ նոր իրագործումներ:

Փոխ նախագահ Տիկ. Լուիզ Սիմոն խօսեցաւ Բարեգործականի իրագործումները եւ դիմագիծը աւելի լայն չափով հանրութեան ծանօթացնելու անհրաժեշտութեան շուրջ, շեշտելով կարեւորութիւնը ծանուցումներու, մամլոյ հաղորդակցութիւններու, վաւերագրական նիւթերու հրատարակութեանց եւ առաջարկեց բարելաւել Միութեան հրատարակութիւնները:

Սպառիչ սակայն շինիչ եւ խանդավառ մթնոլորտի մը մէջ վերլուծուեցան բոլոր այս նիւթերը:

Նախագահ Ա. Մանուկեան ըրաւ համագումարի եզրափակիչ խօսքը, ամփոփելով կատարուած խորհրդակցութիւնները եւ յայտնելով իր գոհունակութիւնը երկօրեայ աշխատանքներու լրջութեան ու մակարդակին մասին:

Համաժողովի մասնակիցներ ժամացոյցի ուղղութեամբ աջէն. Զաւէն Տէր Յարութիւնեան (Պրազիլ) Ճորճ Տէր Բարթող (Կիպրոս), Դոկտ. Արշաւիր Կէօնճեան (Քանատա), Կեդր. Վարչութեան անդամ, Նազար Նազարեան (ԱՄՆ) Կեդր. Վարչութեան գանձապահ եւ Տիկ. Սեսիլ Քէշիշեան անդամ Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովի





Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 73-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Փարիզի մէջ գումարուած Հ.Բ.Ը. Միութեան 73-րդ Ընդհանուր Ժողովին ցկեանս նախագահ Պրն. Ալէք Մանուկեան իր բացման ճառով համապարփակ կերպով ներկայացուց Միութեան անցնող տարեշրջանի գործունէութեան հաշուեկշիռը ու նաեւ արտայայտուեցաւ ծրագիրներուն մասին, որոնք կը բնորոշեն Բարեգործականի ուժականութիւնը: Ստորեւ ուղերձը որոշ յապաւումներով:



«Բարեգործականը Հայ Ժողովուրդին Հետ է Եւ Հայ Ժողովուրդին Համար»

Յարգելի ժողովականներ եւ անդամներ,

Ողեւորութեան մթնոլորտի մը մէջ կը կայացնենք Միութեան 73-րդ Ընդհանուր Ժողովը, որ իրաւասու գերագոյն մարմինն է՝ մեր Բարեգործականի կեանքին, ուղղութեան, սկզբունքներուն եւ գլխաւոր ծրագիրներուն մասին որոշում կայացնելու եւ անոր ճակատագիրը որոշելու: Ուրախ ենք որ այս ժողովը կը հանդիսանայ նոյն ատեն ամէնէն բազմամարդ եւ ամէնէն ներկայացուցչական ժողովներէն մէկը, ուր աշխարհի ամէնէն հեռաւոր անկիւնէն հասնող մտահոգութիւնը կը գտնէ իր արձագանգն ու լուծումը, մինչ այդ կերպով մեր ձայնը եւս կը հասնի մինչեւ հեռաւոր անկիւնները աշխարհի:

Մենք ընդհանուր ժողովներ գումարած ենք Պուենոս Այրէս, Մոնթրէալ, Թորոնթօ եւ Մոնթեվիտէօ, եւ ներկայիս 73-րդ ժողովը եւս գումարելով Փարիզի մէջ հաստատում մը կատարած կ'ըլլանք թէ Բարեգործականը ընդհանրական կազմակերպութիւն մըն է. ան ամէն տեղ է իր ղեկավարութեամբ եւ անդամակցութեամբ: Ան կղզիացած ու մեկուսացած կազմակերպութիւն մը չէ, այլ՝ ժողովրդային. ան հայ ժողովուրդին հետ է եւ հայ ժողովուրդին համար. Բարեգործականը հոն է ուր ցաւ կայ, տագնապ կայ, կարիք կայ, ու կայ նաեւ տեսիլք, կայ շինարարութիւն եւ կայ ապագայ:

Հաւաքուած ենք այստեղ ոչ թէ ներբողը հիւսելու մեր կատարած գործին, այլ վերլուծելու այդ գործը. ճանչնալու մենք զմեզ եւ ճանչցնելու մեր գործը մեր ժողովուրդին: Նոյնպէս, հաւաքուած ենք մենք խղճի քննութիւն մըն ալ կատարելու՝ ստուգելու համար թէ մեր իրագործումները ի՛նչ համեմատութեամբ կը համապատասխանեն մեր սկզբունքներուն եւ մեր յայտարարած ծրագիրներուն: Աշխարհի բոլոր կազմակերպութիւններն ալ գեղեցիկ ծրագիրներ կը դաւանին իրագործել. սակայն, անոնցմէ քիչեր կը փորձեն համեմատականը ընել իրենց աշխատանքին ու դաւանած սկզբունքին, ինչպէս նաեւ ծրագրին. եւ ժամանակի ընթացքին անոնք կը կտրուին իրականութենէն, կը հեռանան իրենց իտէալներէն եւ յաճախ ալ կը հակասեն իրենց դաւանած մարդասիրական սկզբունքներուն: Բարեգործականը զգաստ գիտակցութեամբ մը միշտ բաղդատութեան դրած է իր կատարած աշխատանքը իր իտէալներուն հետ. տագնապած է՝ երբ անոնք չեն համապատասխանած իրարու եւ ջանացած է լուծումներ գտնել իր թերացումներուն համար, սորված է այդ թերիներէն, որովհետեւ մարդիկ յաճախ աւելի կը սորվին իրենց սխալներէն քան յաջողութիւններէն:

Մեր նախորդ Ընդհանուր Ժողովին տեղեկագրած էինք թէ Բարեգործականի ընդհանուր գոյքը հասած էր 73 միլիոն տոլարի. այսօր, կ'ուզենք հպարտութեամբ յայտարարել թէ առ Դեկտեմբեր 31, 1985, Միութեան գոյքը, իր տոմարական արժէքով, բարձրացած է 82,676,000 տոլարի, ինչ որ կը ներկայացնէ 9,650,000 տոլարի յաւելում մը, մինչ նախորդ տարուան մեր յաւելումը եղած էր 2,348,000 տոլար միայն: Իսկ եթէ մեր այսօրուան գոյքը բաղդատենք 1975-ի մեր հաշուեկշիռին հետ՝ կը նկատենք թէ անցնող տասնամեակին մեր գոյքի յաւելումը եղած է 51 միլիոն տոլար:

Մեր անդամակցութիւնը գիտէ թէ մեր ունեցած գումարները մեծ մասով կապուած են հիմնադրամներու մէջ՝ գործածուելու համար մեր բարերարներու սահմանած կտակային առաջադրութիւններուն: Իր բովանդակ պատմութեան ընթացքին Բարեգործականը բծախնդրութեամբ կատարած է բարերարներու եւ կտակարարներու կամքը, եւ այդպիսով արժանացած է նո՛ր բարերարներու եւ կտակարարներու վստահութեան: Անցնող տարեշրջանին, գործադրելով մեր նոր բարերարներու կամքը՝ Միութիւնը հաստատեց հետեւեալ հիմնադրամները.— Մարկարէթ Կայծակեան Հիմնադրամ, Մուշեղ եւ Արշալոյս Շամալեան Հիմնադրամը, Սահակ Սահակեան Հիմնադրամ, Ալիս Գրիգորեան-Գաբրիէլեան Հիմնադրամ, Ն. Հ. Գրիգորեան Հիմնադրամ, Նուարդ Գուլումճեան Հիմնադրամ, Լեւոն Մկրտիչեան Հիմնադրամ, Թագուոր Փորթուգալեան Հիմնադրամ, Այվի Շահրիկեան Հիմնադրամ, Լեւոն եւ Սիրանոյշ Պագալեան Հիմնադրամ եւ Միհրան եւ Ռոզմրրի Հոփլամազեան Հիմնադրամ:

Վերոյիշեալ հիմնադրամներուն կողքին Միութիւնը ընդունեց նաեւ այլ նուիրատուութիւններ ու կտակներ, որոնց համագումարը կը հասնի 2,472,000 տոլարի, նկատի ունենալով նաեւ վերոյիշեալ ցանկը հիմնադրամներու:

Մեր ընդհանուր մուտքը 1985 տարեշրջանին եղաւ 9,844,000 տոլար. այս գումարին մաս կը կազմէին արժեթուղթերու շահաբաժիններն ու տոկոսային եկամուտը՝ 4,008,000 տոլար, որ յատկանշական անկում մը կրած է բաղդատմամբ 1984 թուականին, այսինքն 445,000 տոլար պակաս է մեր նախորդ տարուան եկամուտէն: Քիչ մը հակասական թուի գուցէ թէ գոյքի 10 միլիոն տոլարի յաւելումով ինչպէ՛ս չեն բարձրանար նաեւ եկամուտները: Պատճառը տոկոսներու շարունակուող անկումն է որ նկատելի կերպով կ'անդրադառնայ մեր եկամուտներուն վրայ:

Մեր ելքին կարեւոր մէկ մասը յատկացուած է ազգապահպանման նպատակներու, որոնք աւանդութեամբ կամ կտակային սահմանումով մաս կը կազմեն մեր ծրագիրներուն. ուրեմն, ազգապահպանման ծրագիրներու համար ծախսուած է 5,367,000 տոլար, որով մատակարարուած են մեր սեփական 22 վարժարանները, նպաստաւորուած են 60 այլ վարժարաններ եւ կրթաթոշակ ստացած են 550 համալսարանական ուսանողներ. մշա-

(Շար. էջ 12)

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 73-րդ Տարեկան Համաժողովը, մէկ լրացուցիչ ձեռնարկն էր Միութեան Փարիզի մէջ կայացող 80-ամեակի եզրափակիչ հանդիսութեանց: Արդարեւ, ամբողջ ժողովին մթնոլորտը ունէր տօնական շունչ մը, ուր կը ցոլար ոգեւորիչ լուրերու շողը: Համաժողովը կայացաւ Շաբաթ, Նոյեմբեր 22-ին Հոթէլ Էնթերքոնթինէնթալի Էմփերիալ սրահին մէջ ի ներկայութեան 187 իրաւասու անդամներու, որոնք կը մասնակցէին 2725 ձայնով: Գլխաւոր սեղանին առջեւ տեղ գրաւած էին նախագահ Տիար Ալէք Մանուկեան, որ նոյն ժամանակ ատենավարն էր ժողովին, Գերշ. Գիւտ Եպիսկոպոս Նագգաշեան, Փարիզի Առաջնորդ, Գերշ. Վազգէն Եպս. Քեշիշեան, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, Պրն. Կարլէն Դալլաքեան, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ, Տիկ. Լուիզ Սիմոն, փոխ-նախագահ, Պրն. Արա Զամքերթէն՝ վարիչ պատուիրակ Հ.Բ.Ը.Մ.-ի Զուիցերիական մարմնին, Նազար Նազարեան, փոխ-նախագահ եւ գանձապահ, Սուրէն Ֆէսճեան, Հայկաշէն Ուզունեան, Պերճ Սեդրակեան եւ Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողովի ատենապետ Տոքթ. Էտուար Ադամեան: Ժողովականներու շարքին էր նաեւ Կիպրոսի Համայնքային Տան հայ ներկայացուցիչ Տիար Արամ Գալայճեան:

Ժողովին բացումը կատարուեցաւ ընթերցումովը անցնող տարեշրջանին մահացած անդամներու անուանացանկին, անոնց յիշատակին «Հոգոց» մը արտասանեց Գիւտ Եպիսկոպոս Նագգաշեան, որ ապա կարդաց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա. Կաթողիկոսի Կոնդակը, ղրկուած Միութեան 80-ամեակին առիթով: Կոնդակը ունկնդրուեցաւ յոտնկայս:

Նախագահ Տիար Ալէք Մանուկեան ոգեշնչող ճառով մը բացուած յայտարարեց 73-րդ Ընդհանուր Ժողովը: Ան գոհունակութեամբ յայտարարեց թէ 1985 տարեշրջանին Միութեան գոյքը հասած էր

Բազմամեայ տնօրէն Արա Թոփճեանը (աջին) կը գնահատեն Դոկտ. Բերկրուհի Սվաճեան (ձախին) եւ Նախագահ Մանուկեան

ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ «ԱԿԱՆԱՒՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ»Ի ԿՈՉՈՒՄԻՆ

82,676,000 տոլարի ինչ որ 9,650 հազար տոլարի յաւելում մը կը ներկայացնէր նախորդ տարուան հաշուեկշիռին վրայ: Նախորդ տասնամեակին, 1975-1985, Միութեան գոյքը բարձրացած էր 51 միլիոն տոլարով: Միայն վերջին տարուան ընթացքին Միութեան յատկացումները եւ ծախսերը հասած էին 10,404,000 տոլարի: (Նախագահ Ա. Մանուկեանի ճառը կը տրուի առանձին): Ապա կատարուեցան ատենական գործողութիւնները եւ ընտրուեցան օրուան ատենադպիրը՝ Պրն. Արթօ Համբարձումեան. քուէախոյզ յանձնախումբի ատենապետ ընտրուեցաւ Պրն. Յակոբ Գասարճեան: Նշանակիչ յանձնախումբի ատենապետը՝ Տոքթ. Ա. Կէօճճեան ներկայացուց ընտրելի թեկնածուներու ցանկը: Պրն. Հ. Ուզունեան կարդաց հաշուեքննիչ յանձնախումբին տեղեկագիրը:

Գանձապահ Պրն. Նազար Նազարեան տուաւ տարեկան տեղեկագիրի լուսաբանող հաշուական բացատրութիւնները. ան յայտնեց թէ Միութեան գոյքը հասած էր 82,676,000 տոլարի, սակայն, աւելցուց ան, այդ հաշուարկումը կատարած է տոմարական արժէքի հիման վրայ ու եթէ ուզենք շուկայի արժէքը գնահատել այդ գոյքին, պէտք է աւելցնենք 25,000,000 տոլար եւս: Միութիւնը 1985-ին ընդունած էր, 2,472,000 տոլարի արժէքով կտակներ եւ նուիրատուութիւններ, մինչ միեւնոյն շրջանին եկամուտը հասած էր 4,008,000 տոլարի. այս վերջին գումարը 445,000 տոլարի անկում մը կ'արձանագրէր՝ բաղդատմամբ նախորդ տարուան եկամուտին. այդ անկումը հետեւանքն էր տոկոսային սակերու նուազումին:

Գանձապահի տեղեկագրին մէջ ամէնէն՝ մեծ ոգեւորութիւնը ստեղծեցին Միութեան 80-ամեակին առիթով կատարուած մեծագումար նուիրատուութիւնները: Այսպէս, Թորոնթոյէն Տէր եւ Տիկ. Դանիէլ Զարուկեան Միութեան կը նուիրէին մէկ միլիոն տոլար, կառուցանելու համար Բարեգործականի Թորոնթոյի դպրոցաշէնքը: Պրն. Հրանդ Տարագճեան (Լոնտոն), Տէր եւ Տիկ. Նուպար Վարդեան (Վիեննա) կը նուիրէին 50,000-ական տոլար, իսկ անանուն նուիրատուութիւնները կը հասնէին 700,000 տոլարի: Լիբանանէն Տէր եւ Տիկ. Միհրան Շէքէրճեան 25,000 սթերլինի գումարով կը հաստատէին հիմնադրամ մը ի յիշատակ իրենց հօր՝ Սարգիս Շէքէրճեանի:

Պրն. Սուրէն Ֆէսճեան, ատենապետը Ելեւմտական Յանձնախումբի, ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով բացատրութիւնները տուաւ տարբեր երկիրներու մէջ Միութեան ելեւմտական հաշիւներուն մասին:

Նախագահը ներկայացուց Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ առաջարկուած կանոնագրի մշակման համար կարգ մը փոփոխութիւններ, որոնք որդեգրուեցան ամբողջութեամբ:

Նախագահ Մանուկեան հրաւիրեց հայրենի ներկայացուցիչ Պրն. Կարլէն Դալլաքեանը որ կուռ ճառով մը ողջունեց Միութեան 80-ամեայ ազգանուէր գործունէութիւնը:

(Շար. էջ 12)

Բարերար Դանիէլ Զարուկեան (Թորոնթօ) ելոյթի պահուն

Բարերար Կարպիս Փափազեան (Վիեննա) որ 50 հազար տոլար նուիրեց Հ.Բ.Ը.Միութեան



Վարդգէս Պալեան՝ Միութեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Յանձնաժողովի Ատենապետ

ԴԱՆԻԷԼ ԵՒ ԱԼԻՍ ԶԱՐՈՒԿԵԱՆՆԵՐ 1 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ԿԱՐԼԷՆ ԴԱԼԼԱՔԵԱՆ ԿԸ ԲԵՐԷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏԳԱՄԸ

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահը՝ Պր. Կարլէն Դալլաքեան, որ հիւրն էր կազմակերպիչ յանձնախումբին, տեղ գրաւած էր Հ.Բ.Ը. Միութեան 73-րդ ընդհանուր ժողովի պատուոյ սեղանին վրայ: Նախագահ Տիար Ալէք Մանուկեան, ողջունելէ ետք շնորհաբեր ներկայութիւնը Պր. Դալլաքեանի, հրաւիրեց զայն ներկայացնելու համար մայր հայրենիքի պատգամը ժողովի մասնակիցներուն: Ստորեւ՝ Պր. Դալլաքեանի շահեկան խօսքը իր գլխաւոր գիծերուն մէջ:

Մեծարգոյ Պր. Նախագահ,
Յարգելի տիկնայք եւ պարոնայք,

Մեզ բոլորիս այս հիւրընկալ հողի վրայ ի մի է բերել մեր ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ նշանակալի մի տարեթիւ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 80-ամեայ յոբելեանը:

Ինձ պատիւ է վիճակուել մայր հայրենիքի, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահութեան եւ նրա աշխատակիցների կողմից արտանց եւ ջերմօրէն ողջունելու եւ շնորհաւորելու սփիւռքի ամենագործուն եւ կենսունակ կազմակերպութիւններից մէկի, համաստիւռքեան տարողութեան եւ համամարդկային խնդիրներ լուծող Ձեր կազմակերպութեան տարեդարձը:

Եթէ մարդու կեանքում 80-ամեայ բարձունքը մայրամուտի դիտակէտ է յանախ, ապա տարաստիւռ ժողովրդի բազում ցաւերն ու հոգսերը ամոքելու կոչուած կազմակերպութեան համար հասուն տարիքի, գործնականութեան եւ առողջ սկզբունքների կենսագործման բարձրակէտն է: Եւ միթէ դրա վկայութիւնը չէ՞, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր 80-ամեայ հանդիսութիւններին զուգընթաց, չտարուելով դափնիների բոյրով, այս օրերին գործնական ոգով վարում է իր 73-րդ ընդհանուր ժողովը՝ մտահոգ գալիք խնդիրների լուծմամբ եւ մտահոգ ապագայով:

Գործնականութիւնը Բարեգործականի լաւագոյն աւանդոյթներից է եւ տարիներից ի վեր եղել է նրա նշանաբանը: Լաւից լաւը անելու կարգախօսը գործունէութեան ուղեցոյց է եղել ու մնում՝ Բարեգործականի բոլոր սերունդների համար:

Թերթելով նրա 80-ամեայ պատմութեան էջերը, անխառն հիացմունքի եւ երախտագիտութեան զգացումով ենք յիշում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադիրներին ու ղեկավարներին, առաջին հերթին արժանայիշատակ Պօղոս Նուպարին, որը 1906-ին հիմնադրելով Միութիւնը, փաստօրէն մինչեւ 1930 թուականը կանգնած էր նրա ղեկի մօտ: Երախտագիտութեամբ ենք յիշում Գալուստ Կիւլպէնկեանին, Զարեհ Պէյ Նուպարին եւ Արշակ Գարակէօզեանին: 1953-ից ի վեր Միութեան աշխատանքները վստահօրէն վարում է նրա ցկեանս նախագահը՝ մեծարգոյ Ալէք Մանուկեանը, որի անուան հետ են կապուած վերջին տասնամեակների լայնածաւալ իրագործումները:

Տասնամեակներ առաջ երազելով այսօրուայ ամրակառոյց կազմակերպութիւնը, Պօղոս Նուպարը գրում էր. «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, հաւատարիմ իր աւանդութեանց, պիտի շարունակի ժողովրդին եւ հայրենիքին մատուցանել այն ծառայութիւնները, որ իր գերազանցապէս հայրենասիրական նպատակը գծած է իրեն: Պիտի գայ օր մը, ուր բոլոր հայերը անխտիր պիտի սիրեն զայն իբրեւ ամենափայլուն ար-

(Շար. էջ 14)

Հանդիսաւոր նիստի նախագահութեան սեղանը. ձախէն աջ՝ Կարլէն Դալլաքեան, Սուրէն Ֆեսճեան, Գիւտ Եպս. Նագգաշեան, նախագահ Ալեք Մանուկեան

(Շարունակուած էջ 11-էն)

Ապա ծանուցուեցաւ արդիւնքը Կեդրոնական Վարչական Ժողովի մասնակի ընտրութեան, որով վեց տարուան շրջանի մը համար կը վերընտրուէին ՊՊ. Հայկաշէն Ուզունեան եւ Յովսէփ Եուսէֆեան՝ արտասահմանէն, իսկ Ամերիկայէն Տոքթ. Գէորգ Քէշիշեան, Տոքթ. Կրեկորի Ադամեան եւ Պրն. Պերճ Սեդրակեան: Իսկ Հաշուեփակիչ Յանձնախումբի ատենապետ ընտրուեցաւ Պրն. Վ. Նաճարեան:

Նախորդ երկու օրերուն, Հինգշաբթի եւ Ուրբաթ, Նոյեմբեր 20 եւ 21-ին, Միութեան Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ կայացած համագաղութային խորհրդակցական համաժողովին մասին ամփոփ տեղեկագիր մը ներկայացուց Պրն. Ժագ Սարգիսեան:

Ընդհանուր ժողովի ամենայուզիչ պահերէն մէկն էր երբ նախագահ Մանուկեան բարձրախօսին մօտենալով յայտարարեց.

«Բարեգործականի յաջորդական սերունդներ որոնք դաստիարակուած են Պրն. Արա Թօփճեանի շունչով, յաջողած են իրենց ասպարէզներուն մէջ եւ իրենց կարգին նուիրուած են ազգային ու միութենական ծառայութեան: Այդ սերունդներուն նուիրումը ամէնէն գեղեցիկ ընծաներէն մին է որ կրնար Պրն. Թօփճեան պարգեւել Բարեգործականին:

Պրն. Թօփճեան մէկն է այդ ականաւոր դէմքերէն, եւ որուն հոգեկան արիութիւնը աւելի եւս շեշտուեցաւ Լիբանանի արիւնալի պատերազմի տարիներուն՝ երբ ան խիզախօրէն — մինչեւ անգամ իր կեանքը վտանգելով — շարունակեց իր նուիրումը Բարեգործականի կրթական գործին:

Ռումբերուն դէմ ցցելով իր գիտակցութեան վահանը, կործանումներու դըժուարութեանց դէմ իր պայծառ տեսիլքը, ան հանդիսացաւ խորհրդանիշը մեր կրթական առաքելութեան»:

Ապա նախագահը Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի վաստակաւոր տնօրէն Պրն. Արա Թօփճեանին յանձնեց պրոնզեայ վահան մը, որ զինք կը հոչակէր «Ականաւոր Կրթական Մշակ»: Յայտնապէս յուզուած եւ անակնկալի եկած՝ Պրն. Արա Թօփճեան յայտարարեց թէ այդ պատիւը ուղղուած կը նկատէ **բոլոր** հայ դաստիարակներուն:

Այնուհետեւ նախագահը պատուոյ գիրեր յանձնեց խումբ մը բարերարներու եւ Ֆրանսայի շրջանակի վեթերաններուն:

Աւստրալիայէն Պրն. Զաւէն Չէչէնեան կարդաց Ընդհանուր Ժողովին կողմէ որդեգրուելիք որոշումներու ցանկը, որ ամբողջութեամբ վաւերացուեցաւ:

Նկարիչ Գրիգոր Նորիկեան որ գեղեցիկ ջրաներկ նկարով մը ներկայացուցած էր Միութեան նախագահներու շարքը յայտագիր-գրքոյկին մէջ, իր գործին բընանկարը հանդիսաւորապէս նուիրեց նախագահ Ալեք Մանուկեանին:

Ապա Տոքթ. Էտուար Ադամեան շնորհակալութիւն յայտնեց այն անդամներուն որոնք գիշեր-ցերեկ աշխատած էին ամիսներով, իրականացնելու համար համագումարին եւ 80-ամեակի հանդիսութեանց շքեղ ծրագիրները:

Հ.Բ.Ը. Միութեան 73-րդ Ընդհանուր Ժողովը աւարտեցաւ ընդհանուր ոգեւորութեան մէջ, նախագահին հակիրճ փակման խօսքով եւ ներկայ անդամները մեկնեցան ժողովասրահէն, վկայելով թէ իրենց սիրած Միութիւնը կը հարստանար ոգիով եւ նիւթականով:

■

Ժողովուրդին Հետ Եւ Ժողովուրդին Համար

(Ալեք Մանուկեանի ճառը շարունակուած էջ 10-էն)

կրթական ձեռնարկներու կատարուած յատկացումները հասած են 1,112,000 տոլարի, երիտասարդական շարժումներուն՝ 354,000 տոլար, խնամատարական կարիքներու՝ 421,000 տոլար, ազգային-կրօնական հաստատութեանց եւ անհատներու — ըստ կտակային պայմանադրական տրամադրութեանց՝ 652,000 տոլար: Ելքի գումարին մաս կը կազմեն հիմնադրամներու պահեստի նախատեսութիւնը՝ 250,000 տոլար եւ Միութեան վարչական ծախքը՝ 1,289,000 տոլար: Ելքին մաս չեն կազմեր շինարարական նպատակներու համար կատարուած յատկացումները, որոնք գոյքի յաւելում կը նկատուին. 1985-ին կալուածային գնումի, կրթական, մշակութային եւ երիտասարդական կեդրոններու կառուցման, այլ շինութեանց եւ կարեւոր նորոգութեանց համար յատկացուցած ենք 826,000 տոլար: Այս վերջին գումարին վրայ աւելցնելով 9,578,000 տոլարի ելքը մեր մէկ տարուան յատկացումին համագումարը կը հասնի 10,404,000 տոլարի:

Ինչպէս կը տեսնուի՝ մեր յատկացումներուն ամէնէն կարեւոր մասը կը սահմանուի կրթական գործին. այսինքն մեր կրթական յատկացումները կը կազմեն 56 տոկոսը մեր ընդհանուր ելքին, զանց առնելով, բնականաբար մեր վարչական ծախսերը:

Սփիւռքահայ կեանքը մնայուն շարժումի մէջ է եւ յարատեւօրէն ենթակայ՝ քաղաքական եւ ընկերային վերիվայրումներու: Ոչ մէկ հնարաւորութիւն ունինք ազդելու դէպքերու վերիվայրումներուն վրայ, սակայն, անխուսափելիօրէն հարկադրուած կը զգանք դարմանելու այդ դէպքերուն հետեւանքով ստեղծուած կացութիւններն ու կարիքները: Մէկ կողմէ Միջին Արեւելքի տագնապահար գաղութները սուր պահանջը կը ստեղծեն խնամատարական աշխատանքի, միւս կողմէ գաղթականութեան նոր հոսանքներ ընդունող գաղութները հարկադրանքին առջեւ կը գտնուին նոր դպրոցներ բանալու, նոր կեդրոններ կառուցանելու, ընկերային սպասարկութեան գրասենեակներ հաստատելու եւ երիտասարդական ու մշակութային ընդարձակուող ծրագիրներ մշակելու: Այսպէս՝ 1976-էն ի վեր Միութիւնը 200,000 տոլար յատկացուցած է Թուրքիոյ ներքին գաւառներէն փախչող ու Հոլանտա հաստատուող հայ գաղթականներուն, 500,000 տոլար՝ Լիբանանի խնամատարական ծրագիրներուն եւ 300,000 տոլար ալ Ամերիկայի մէջ վերահաստատուող գաղթականներուն: Լոս Անճելըսի եւ Նիւ Եորքի մեր ընկերային ծառայութեան գրասենեակները օժանդակած են 5000 դիմողներու, իսկ երբ Վենեսուելայի Միխթարեաններուն լինելութեան տագնապը յառաջացաւ՝ 475,000 տոլարի օժանդակութիւն մը փութացուեցաւ Բարեգործականի միջոցաւ:

Կալուածական հսկայ եւ բարդ ծրագիրներ կ'իրականանան հետզհետէ եւ կարգ մը վայրերու մէջ ալ միայն անձկութիւն ու ցաւ կը պատճառէ մեր կալուածներուն ճակատագիրը. նոր դպրոցաշէնք կը գտնուի Լոս Անճելըսի մէջ, վարժարանի նոր հող կը գտնուի Աւստրալիոյ մէջ, Մելգոնեանի հսկայ ծրագիրը կը մտնէ գործադրութեան փուլին մէջ: Կը փափաքինք այստեղ շեշտել թէ Մելգոնեանի ծրագիրը հողի առուծախի ծրագիր մը չէ՝ այլ շինարարական ծրագիր մը: Հողի առուծախը կը կատարուի միմիայն իրականացնելու համար Միութեան քսան տարիներու երազը: Գործնական եւ զգացական պատճառներով որոշուած է Մելգոնեանը պահել իր ներկայ վայրին մէջ, ու հարիւր հողակտոր հող ծախելով գոյացնել շինութեան ծախսերը. ցարդ ծախած ենք 59 կտոր հող եւ ապահոված ենք 3 միլիոն տոլար: Վաճառուող հողամասը չէ գործածուած ու պիտի չգործածուի երբեք դպրոցին կողմէ: Դպրոցական նոր համալիրը պիտի ունենայ արդիական դասարաններ, մարզարան ու մարզադաշտեր եւ արդիական բոլոր յարմարութիւնները գոհացնող պայմաններ: Մեր ծրագիրն է 400-500 աշակերտներով Մելգոնեանը վերածել արտասահմանի ամէնէն ընդարձակ գիշերօթիկ վարժարանին, որպէսզի ան ծառայէ ոչ միայն Միջին Արեւելքի գաղութներու պահանջներուն, այլ նաեւ բովանդակ գաղթահայութեան կրթական նպատակներուն:

Չի բաներ նայիլ մեր Միութեան 80 տարիներու գործունէութեան վրայ ու գոհանալ անով: Աշխարհը արագ յեղաշրջումի մէջ է եւ դէպքերը կ'ընթանան մեր քայլերէն աւելի արագ եւ յաճախ կը ստեղծեն կացութիւններ որոնց դարմանը գտնելը անկարելի կը դառնայ:

Մենք պէտք է փնտռենք նաեւ գործակից կազմակերպութիւններ եւ օժանդակենք անոնց որ իրականացնեն որոշ ծրագիրներ. եւ իրագործուած ծրագիրներու այդ համադրութիւնն է որ պիտի սատարէ ազգապահպանման ընդհանուր գործին: Մենք պէտք է սփիւռքը տեսնենք իր ամբողջութեան մէջ եւ ոչ թէ առանձին շերտերով: Այս իրականութեան մէջ մենք պէտք չէ մոռնանք նաեւ մեր վերածնած հայրենիքի՝ Մայր Հայաստանի կենարար դերը:

Գաղութներու զանգուածային տեղաշարժով Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի հայ գաղութները դարձած են ամէնէն հայաշատ կեդրոնները: Այդ երկու գաղութները գրեթէ միասնաբար մէկ միլիոնի հասնող հայկական զանգուած մը կը ներկայացնեն ինչ որ մարդկային հսկայական դրամագլուխ մըն է, եւ պէտք է այդ դրամագլուխը ի սպաս դրուի ամբողջ հայութեան. նիւթական, գործնական ու մարդկային հսկայ կարողականութիւն մը ստեղծուած է այս գաղութներուն մէջ, որոնք ոչ միայն պէտք է կարենան հասնիլ իրենց անմիջական կարիքներուն, այլ պէտք է ձեռք երկարեն նաեւ մեր միւս գաղութներուն, որոնք կարիքը ունին առաջնորդութեան, մտաւորական ներշնչումի եւ նիւթական աջակցութեան:

Կ'ողջունենք հեռաւոր ու մերձակայ երկիրներէ համախմբուած մեր իրաւասու անդամները եւ այդ սրտագին ողջոյնով ալ բացուած կը յայտարարենք Միութեան 73-րդ ընդհանուր ժողովը:

■

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԿԱՎԱ ՇԱՇԿԵՐՈՅԹ

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԾԱՌԱՅԵԼԸ ՊԱՏԻՒ ՄԸՆ Է»

ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՆՈՒԿԵԱՆ





☐ Նախագահը եւ Առաջնորդ Գիւտ Սրբազան (Վերի աջի նկար)

☐ Էտուըրտ Ադամեան եւ Տիկ. Մարի Մանուկեան

☐ Տիկ. Ռոզէթ Ուզունեան, Տէր եւ Տիկ. Հայկաշէն եւ Մարի Ուզունեան եւ Վարդան Ուզունեան

☐ Տարեդարձի կարկանդակը կտրելու պահուն



Հնգօրեայ յոբելեանական հանդիսութեանց, Միութենական աշխատանքներու եւ Ընդհանուր Ժողովին եզրափակիչ յայտագիրը հանդիսացաւ իր տեսակին մէջ տառացիօրէն աննախընթաց կալա-ճաշկերոյթը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 22 Նոյեմբերի երեկոյեան Հոթէլ Էնթէրքոնթինէնթալի սրահներուն մէջ, ներկայութեամբը 620 անձերու:

Յիշատակենք որ բոլոր ձեռնարկներուն տոմսերը ամիսներ առաջ վաճառուած էին եւ շատերու անունները կը գտնուէին «սպասման ցանկ»ին վրայ:

Ներկաները մեծ մասամբ, հետեւած էին շաբթուայ օրերու Միութեան գործունէութեանց եւ անոր կազմակերպած այլազան ձեռնարկներուն, աշխատած եւ գործակցած միասին: Աշխարհի չորս ծագերէն Լոյս-Քաղաք ժամադրուած վաղեմի բարեկամ միութենականներ թէ իրարու կիսաժանօթ անդամներ հինգ օրերու խանդավառ մթնոլորտին մէջ դարձած էին հարազատներ: Եւ կալա-ճաշկերոյթը, ինչպէս ասոր նախորդող քոքթէյլը վերջին հանդիպման եւ բաժանման պահերն էին:

Ճաշկերոյթէն ետք անակնկալը կամ վերեւ ակնարկուած «աննախընթաց»ը կը կայանար 20 վայրկեան տեւողութեամբ *լէյզըր պատկերասփռումի* մէջ, սրահին երկու հակադիր կողմերը զետեղուած շարժանկարի լայն պաստառներու վրայ:

Թէքնոլոճիի վերջին գիւտերը օգտագործող այս «շարժանկար»ին պատկերները, երաժշտութիւնը ինչպէս նաեւ նիւթը յղացուած էին Տէր եւ Տիկ. Լեւոն Քեպապճեանի կողմէ: Երաժշտութեան համար օգտագործուած էին հայկական որոշ մեղեդիներու նախադասութիւններ գերարդիական երաժշտական ոճերով միախառն: Պատկերները ընդհանրապէս առնուած էին հայ նկարիչներու գործերէն, լուսանկարներէ եւ գծագրութիւններէ — Սարեան, Մինաս, Գառզու եւայլն, որոնց վրայ կը պարէին անջատուած մասերով, ու ապա ամբողջացած, Միութեան «զինանշան»ը, «լոկո»ն: Ներկայացուածը ձեւով մը հայոց ժամանակակից պատմութիւնն էր ու նաեւ Բարեգործականինը իր կարգ մը նախագահներու եւ գործիչներու պատկերներով:

Պրն. Ալեք Մանուկեան կատարեց եզրափակիչ ուղերձը, խօսելով 34 տարիներու իր ծառայութեան մասին, որպէս Միութեան նախագահը. «Բարեգործականը ինծի բերաւ իմ ժողովուրդս եւ ես երախտապարտ եմ անոր համար — ըսաւ Պրն. Մանուկեան — հայ ժողովուրդին ծառայելը պատիւ մը եւ պարտականութիւն մը եղաւ միանգամայն, իսկ Բարեգործականին միջոցով ծառայելը՝ ճշմարիտ հաճոյք մը, իսկ ես կը փափաքիմ այսօր այդ երեք ու կէս տասնամեակներու ծառայութիւնը ձօնել Պօղոս Նուպարի յիշատակին...»:

Պրն. Մանուկեան անդրադարձաւ Միութեան հիմնադիրներու առաջին կոչին, հոն արտայայտուած նպատակին որ կը նպատակադրէր. «Մեր Հայաստանի եղբարց անմիջական օգնութեան հասնիլ»: Այդ հիմնարկները «*լուսեղէն շաւիղ* մը բացին հայուն երկնակամարին վրայ, *յոյսի ծիածանը* շողացուցին անոր մտքին մէջ եւ *ինքնակերտումի կամքը դրին անոր հոգիէն ներս*»:

Բարեգործականին «յոյսը խարսխուած մնաց *հայ հողին վրայ* եւ մինչեւ 1920-ական թուականներու վերջերը, ան շարունակեց օգնել արիւններէն եւ աւերակներէն բարձրացող *վերածնեալ Հայաստանին*»: Ու «մեզի համար հայութիւնը *մէկ ամբողջութիւն կը ներկայացնէ՝ իր Հայաստանով եւ սփիւռքով*, մէկը միւսին լծող ու գործակից՝ վասն լուսաւոր ապագայի մը ուխտին»:

Ճաշկերոյթը երկարաձգուեցաւ պարահանդէսով մը մինչեւ առաւօտեան վաղ ժամերը:

ԳԼԽԱՒՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐ

Տէր եւ Տիկ. Ալեք Մանուկեան	$ 80.000	ԱՄՆ
Տէր եւ Տիկ. Կարպիս Կիրիկեան	25.000	ԱՄՆ
Տիար Ժոզէֆ Գասարճեան	25.000	Լիբանան
Տոքթ. եւ Տիկ. Յարութիւն Միսճեան	25.000	ԱՄՆ
Տիարք Ճոն եւ Ճորճ Քիւրքճեան	25.000	ԱՄՆ
Տիկ. Լուիզ Սիմոն	10.000	ԱՄՆ
Տէր. եւ Տիկ. Դանիէլ Զարուկեան	10.000	Քանատա
Տէր. եւ Տիկ. Արշակ Տիգրանեան	10.000	ԱՄՆ
Տէր. եւ Տիկ. Սուրէն Ֆեսճեան	10.000	ԱՄՆ
Տէր. եւ Տիկ. Ճորճ Տապպաղեան	10.000	ԱՄՆ
Տէր. եւ Տիկ. Հրայր Յովնանեան	10.000	ԱՄՆ
Տիար Արթին Մութաֆեան	10.000	Բրիտանիա
Տիարք Կարպիս, Նուպար եւ Նազար Նազարեան	10.000	Լիբանան-ԱՄՆ
Տիարք Սարգիս, Աւետիս Յակոբ Տեմիրճեան	10.000	Լիբանան
Տէր եւ Տիկ. Պերճ Պոյաճեան	10.000	ԱՄՆ
Տէր եւ Տիկ. Վահագն Յովնանեան	5.000	ԱՄՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏԳԱՄԸ

(Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆԻ ՃԱՌԸ

Շարունակուած էջ 11-էն)

տալայտութիւնը ազգային միութեան, եւ իբրեւ համերաշխութեան եւ գործակցութեան մեծասքանչ գործ մը»:

Բացարձակապէս հայրենասիրական, ազգանուէր գործունէութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր առաջին իսկ քայլերով ուրոյն տեղ գրաւեց մեր ժողովրդի պատմութեան մէջ:

Եթէ կազմակերպութեան նպատակը միայն բարեգործութիւնը լինէր, ապա նրա անունը միայն յիշատակման կ'արժանանար նման հարիւրաւոր կազմակերպութիւնների անունների հետ: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան նպատակը եւ խնդիրը շատ աւելի վեհ է ու բարդ. պահպանել ազգի աշխարհասփիւռ բեկորները, հայն ու հայութիւնը իր մշակոյթի հողում, պահպանել հայկականութիւնը իր արմատներով:

Ժամանակների պահանջներին՝ Հ.Բ.Ը. Միութիւնը արձագանգեց միշտ ժամանակին ու բոլորանուէր: Լինէր դա առաջին տարիները կենսապահպանման օգնութիւնը գաղթականներին թէ եղեռնի վերապրողներին, լինէր աջակցութիւնը հրաշքով վերածնուած Սովետական Հայաստանին, թէ ամուր թիկունքը 1946-47 թթ. զանգուածային հայրենադարձութեանը, թէ 50-ական թուականներին սկսուած դպրոցաշինութեան հսկայածաւալ ծրագրի իրականացումը: Դպրոց, մանկապարտէզ ու թերթ, դասագիրք եւ երիտասարդական ակումբ, թէ ծերանոց, կրթաթոշակ, թէ գիտական, մարզական հաւաք. բազմաթիւ են Հ.Բ.Ը.Մ.-ի մտահոգութիւնները, լայն է նրա գործունէութեան շրջանակը:

Այս նոյեմբերեան օրերին մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը նշում է իր գոյութեան 66-րդ տարելիցը: Դժուարին մաքառումների ու քրտնաթոր յաղթանակների ճանապարհ էր, որ անցանք ու կանգնած ենք այսօր նոր մի վերելքի առջեւ:

Միշտ ամուր եւ հետեւողական են եղել Հ.Բ.Ը. Միութեան եւ մայր հայրենիքի կապերը: Կարելի է անվարան ասել, որ Սովետական Հայաստանի գոյութեան բոլոր 66 տարիների ընթացքում Բարեգործականը մշտապէս կանգնած է եղել նրա կողքին, մտահոգուել նրա հոգսերով, ներշնչուել հարազատ երկրի յաջողութիւններով: Մայր հայրենիքն էլ իր հերթին միշտ բարձր է գնահատել Հ.Բ.Ը.Մ.-ի ազգանուէր գործունէութիւնը: Բայց մենք վատ գործիչներ կը լինենք, եթէ միայն հանոյախօսութիւններ շռայլենք իրար հասցէի: Այսօր, արժանին հատուցելով երէկուայ արածին, պէտք է անպայման մտածենք վաղուայ մասին, այսօր իսկ միասնական միջոցներ ձեռք առնենք մեր աշխատանքը աւելի արդիւնաւորելու, մեր համագործակցութիւնը աւելի գործնական հիմքերի վրայ դնելու նպատակով: Հայրենիք-սփիւռք մշակութային կապերի ներկայ իրավիճակը պահանջում է դրանց ամրապնդման եւ զարգացման նոր որակ, աւելի նպատակասլաց, աւելի գործնական:

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն պատրաստ է համագործակցութեան ձեռք մեկնելու Սովետական Հայաստանի շուրջ համախմբուած բոլոր կազմակերպութիւններին՝ առանց խտրականութեան ու նախապայմանների: Սփիւռքահայ մամուլում մեր Կոմիտէն յաճախ են անուանում հայրենիքը եւ սփիւռքը իրար կապող կամուրջ: Կամուրջ բառը ենթադրում է երկկողմանիութիւն, երկխօսութիւն, փոխգործութիւն: Հայրենիք-սփիւռք կապերին վերաբերող բոլոր հարցերը, լինի դա մամուլ ու գիրք, յոբելեան, փոխայց թէ գիտական հետազօտութիւն, պէտք է լուծուեն միասնականօրէն, խորհրդակցաբար: Կոմիտէի բաժինները այսուհետեւ բոլոր համայնքներին վերաբերող տարեկան ծրագրերը նախօրօք համաձայնեցնելու եւ գաղթօճախների կազմակերպութիւնների հետ, հաշուի առնելով բոլոր դիտողութիւններն ու առաջարկութիւնները: Մեր աշխատանքում կատարուող այս եւ նման որակական տեղաշարժերին իրենց ակտիւ մասնակցութիւնը պէտք է բերեն սփիւռքի հայրենասիրական կազմակերպութիւնները, մասնաւորապէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որի 80-ամեայ հարուստ փորձը շատ բանով կարող է նպաստել ընդհանուր յաջողութեանը:

Բազմաթիւ երկրների հայկական գաղթօճախներում գործում են Միութեան մի քանի տասնեակ դպրոցներ, մշակութային կենտրոններ, եռուն կեանքով են ապրում նրա ակումբները, գրադարանները, պարախմբերը, երիտասարդական, մարզական եւ կանանց կազմակերպութիւնները, մշակութային, կրթական եւ այլ յանձնախմբերը: Հ.Բ.Ը. Միութեան մեր օրեայ գործունէութեան մասին կարելի է շատ խօսել, բայց այն շատ աւելի լաւ են ներկայացնում 73-րդ ժողովի մասնակիցները, իսկ ես ցանկանում եմ կրկին շեշտել նրա գործունէութեան կարեւորագոյն բնագաւառներից մէկը՝ կրթական գործը: Սփիւռքը, եւ մասնաւորապէս Ձեր կազմակերպութիւնը, տիտանական ջանքեր են թափում մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեան ուղղութեամբ: Այդ ամէնը, ի հարկէ, շնորհակալութեան արժանի է , բայց ամէն նոր դպրոց բացելու առաջարկութիւնը գոհունակութիւն պատճառելուց զատ նաեւ մտահոգութիւնների տեղիք է տալիս: Այդ մտահոգութիւններից կարեւորագոյնը, իմ կարծիքով, նորաբաց դպրոցի յետագայ գործունէութիւնը ապահովելն է: Գաղտնիք չէ, որ յաճախ տարբեր կազմակերպութիւններ եւ անհատներ դպրոցների շէնքեր են կառուցում նոյն թաղամասում, անգամ նոյն փողոցի վրայ, ուր յաճախում են առաւելագոյնս մի քանի տասնեակ աշակերտներ: Եւ դա այն դէպքում, երբ նման դպրոցների կարիք են զգում այլ գաղութներում, երբ գործող շատ դպրոցներ նիւթական ծանր վիճակի մէջ են: Սա սփիւռքի սուղ միջոցների, ուժերի փոշիացման ցաւալի երեւոյթ է, որը առաւել եւս վնասակար է այն պայմաններում, երբ արդէն իսկ գործող վարժարանների ուսուցիչները ցածրագոյն վարձատրութիւն են ստանում, երբ որակը եւ բարձր նպատակները երբեմն զոհաբերւում են մանր փառասիրութեան: Ինչու միայն ուսուցիչները: Ցաւօք, նիւթական ծանր պայմանների մէջ են նաեւ հայապահպանութեան գործի միւս նուիրեալները՝ գրողները, արուեստագէտները, խմբագիրները, լրագրողները... Միթէ այս հարցը չի՞ կարող լուծուել, միասնական ուժերով, միասնական միջոցներով:

*«Հայապահպանութիւնը պետական միջոցներ պահանջող առաքելութեան մը վերածուած է սփիւռքի մէջ» — նախորդ ժողովում նշել է Ալեք Մանուկեանը: Ես կ'աւելացնէի՝ նաեւ **պետական մտածողութիւն:** Հայրենասիրական ուժերի տրոհուածութիւնը, տարակածութիւնը որքան հասկանալի եւ ընդունելի է գաղափարախօսական ոլորտում, նոյնքան պարսաւելի եւ տարօրինակ է հայապահպանութեան ու մշակութային հարցերում: Այսօր, երբ*



«Գծանկար» գործ Հրաչեայի

ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Հայկական արուեստի, հնագոյն, միջնադարեան թէ ժամանակակից, համապարփակ պատկերացումը ներկայացուեցաւ չորս տարբեր ցուցասրահներով, կալըրիներու եւ թանգարանի մէջ՝ ամէն ներկայացում ինքն իր մէջ ամբողջական եւ միւսին լրացուցիչ մէկ պատկերը պարզելով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Նուրհան Ֆրէնկեան Հիմնարկութիւնը կամ «Հայկական Թանգարան»ը կը գտնուի քաղաքին մէկ ամէնէն պերճ թաղամասին մէջ, Ֆոշ պողոտային վրայ: Շէնքի մը ամբողջ գետնայարկը տրամադրուած է ֆրանսական պետութեան կողմէ: Բացի Հիմնարկութեան սեփականութիւնը կազմող արուեստի գանձերէ, Հոկտեմբերէն ի վեր թանգարանի սրահներուն մէջ ցուցադրուած է նաեւ «Հայկական արուեստը ֆրանսական հաւաքածոներուն մէջ» բաժինը:

Մեր ուղեցոյցն է հայագէտ Փրոֆ. Ժան-Փիէր Մահէ, որ հայերէնով հանգամանօրէն կը բացատրէ ցուցահանդէսին մէջ ներկայացուած գործերը: Ներկայ է նաեւ Հիմնարկութեան հիմնադիրը՝ Պրն. Նուրհան Ֆրէնկեան, ինչպէս նաեւ Փարիզի առաջնորդ Գիւտ Եպս. Նագգաշեանը:

Հին դրամներու հաւաքածոյին մէջ կը գտնուին նախաքրիստոնէական, բիւզանդական, լատին-արեւելեան, արաբական եւ կիլիկեան թագաւորութեան շրջանները ներկայացնող հին դրամներ, նմոյշներ, հայկական գորգերու, մասնաւորաբար Ղարաբաղի մէջ աշխատուած, ուրարտական քաղաքակրթութեան պատկանող առարկաներ, հին ձեռագիրներ, 14-րդ դարու մագաղաթներ, մանրանկարներ, 1663-ին տպագրուած աղօթագիրք, 11-րդ դարէն դաշոյններ, 18-րդ եւ 19-րդ դարե-

«Կոմիտաս» եփածոյ՝ Փաթրիք Սամուէլեանի





«Սպասումը» գործ Ժորժ Միլտոնեանի

«Արտացոլում Հայելիին մէջ»
գործ՝ Ժան Գազանճեանի

«Ինքնանկար» Պարգեւ Ճիպօղլեանի



ոէն Քիւթահիոյ եւ Սիվազի սերամիքներ, տպածոյ արուեստի նմոյշներ, հին զգեստներ եւ արուեստի այլ առարկաներ:

Ցուցահանդէսը, իր ներկայ ձեւով, անշուշտ չի կրնար հարազատօրէն եւ ամբողջական ձեւով ներկայացնել հայկական երեքհազարամեայ արուեստի պատմութիւնը, սակայն կը յաջողի գոնէ հայ թէ օտար այցելուին օգտակար գաղափարը տալ զուտ հայկական արուեստին առանձնայատկութիւններուն եւ ձեւերուն մասին: Եւ ասիկա պզտիկ բարիք մը չէ:

ԿԱԼԸՐԻ ՖՐԱՄՈՆ

Ֆրանսական առաջնակարգ կալըրի *մըն է Ֆրամոնը*, Սէն գետի անմիջական ափին: Անոր տէրն ու տնօրէնն է արուեստի նուրբ քննադատ Պրն. Գրիգոր Համբարձումեան, որ հեղինակն է հայերէնով, «Գալէիտոսքոբ» հատորին: Կալըրի Ֆրամոնի մէջ ցուցադրուած էին երեք հայ արուեստագէտներու գործերը, երեքն ալ հանրածանօթ՝ հակառակ երկու տարբեր սերունդներու իրենց պատկանելիութեան: Ակադեմական Գառզու եւ երիտասարդ սերունդի ներկայացուցիչներէն՝ Ասատուր եւ Ժան Գազանճեան: Հայկական ցուցահանդէսներու քիչ մը տարտղնուած եւ շփոթ յառաջացնող պատկերը չէ որ կը տիրէր հոն: Ամէն ինչ մտածուած էր՝ յըստակօրէն ներկայացնելու երեք արուեստագէտները, որքան ալ անոնք շատերուն համար լաւածանօթ կամ որոշապէս ծանօթ եղած ըլլային:

Լուսարձակը կեդրոնացած էր Ասատուրի գործերուն վրայ, որոնք աւելի քան տպաւորիչ էին: Ասատուր, իր սերունդի ամէնէն տաղանդաւոր արուեստագէտներէն մէկն է, որ ցարդ հանրութեան առաւելաբար ծանօթ էր որպէս առաջնակարգ, վարպետ փորագրիչ-արուեստագէտ, արժանացած ըլլալով Փարիզի Մեծ Պարգեւին: Այս ցուցահանդէսով, ան կը ներկայանար նաեւ որպէս մեծ պաստառի իւղանկարիչ եւ ջրանկարիչ, որոնք իրենց աշխատանքի եղանակով եւ միջոցներով այլապէս իւղանկար գործեր կրնան ընկատուիլ:

Իր ուղին գտած է, զայն խորացնող եւ այլազանող արդիականութեան արուեստագէտն է Ասատուր որ գիտէ գրեթէ վերացական «ձեւերով» պատկերացնել իրական բնութիւնը, մարդը, շրջապատը եւ ներկայ դարը:

Ժան Գազանճեան, իր կողմէ, կը մնայ հաւատարիմ իր գերիրապաշտական ձգտումներուն՝ իր երեւակայական աշխարհի սքանչելի գիծերով:

Իսկ Գառզուի մասին կարելի չէ ոչ մէկ նորութիւն ըսել, բացի անկէ, իր իր գործերը կարելի է միայն դիտել եւ տարուիլ իր ստեղծած հմայիչ աշխարհով:

ԿԱՐԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆ - ԿՈՐՔԻ

Ճոխ — կարելի է ըսել — հաւաքածոյ մը ժամանակակից հայ նկարչական գործերու, որոնց մէջ կը գտնուին արուեստի նմոյշներ մեր գեղարուեստի մեծագոյն դասական դէմքերէն — Մարտիրոս Սարեան, Արշիլ Կորքի, Այվազովսկի, Գառզու — մինչեւ երիտասարդ տաղանդները — ինչպէս Վահէ Պարսումեան: Վերջին հարիւրամեակն է, որ շուրջ քառասուն անուններով եւ գծագրութիւններով կը ներկայանայ մեզի, անձնական ցուցասրահի մը համար անհաւատալի թոռուղ մէկտեղումով: Նկարչական ձեւերու, յղացքի եւ «դպրոց»ներու տարբերութիւնները դրսեւորող այդ գործերը կարելիութիւն մը կ'ընծայեն նաեւ պատկերելու հայ արուեստի անցած ուղին:

Ցուցասրահը հիմնուած է իր ներկայ տէր ու տնօրէն՝ Կարիկ Պասմաճեանի կողմէ 1978-ին եւ կը ծառայէ սփիւռքի թէ Հայաստանի հայ տաղանդաւոր արուեստագէտներու գործերը ներկայացնելով զանոնք ծանօթացնելու յատկապէս օտար արուեստասէր շրջանակներու:

ԿԱԼԸՐԻ ՄԱՐԻՆԵԱՆ

Նոյնանուն շքեղ պողոտային վրայ գտնուող այս ցուցասրահը կը պատկանի հայ համբաւաւոր նկարիչի մը ընտանիքին: Տիկ. Ժանսեմ տնօրինուհին է 1960-ին հիմնուած այս կալըրիին:

Ժամանակակից հայ նկարիչներու ամէնէն կարկառուն դէմքը հանդիսացող Ժանսեմ — Ժան Սեմերճեան — կը ներկայանար 35 մեծադիր պաստառներով որոնք կը պատկերէին եկեղեցական թեմա մը՝ «Թափօր»ը: Կարելի էր նաեւ գործերը անուանել «Խաչելութիւնը», քանի շարք մը պաստառներուն մէջ խաչուած Յիսուսը կը կրեն թափօրներուն մասնակցողները:

Այս տխուր, եւ մինչեւ անգամ ճնշիչ մթնոլորտ պայմանաւորող նկարը պայծառակերտուած էր շնորհիւ արուեստագէտին թեթեւ երանգներուն, նուրբ գիծերուն, ձեւերու *թեթեւութեան*, որոնք Ժանսեմին արուեստին յատկանիշները կը կազմեն:

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հ.Բ.Ը. Միութեան Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ տեղի ունեցող ցուցահանդէսով կարելի է բոլորած նկատել հայկական արուեստի այս համապարփակ ներկայացումը, Հ.Բ.Ը. Միութեան 80-ամեակին առթիւ:



«Ուխտագնացը» պրոնզեայ քանդակ՝
Խաչիկ Գազանճեանի

Ներկայացուած են 35 նկարիչներու գործերը: Բնականաբար տաղանդաւորներու, արդէն կազմաւորուած նկարիչներու կողքին երիտասարդ կամ կարգ մը սկսնակ նկատուող արուեստագէտներու գործերը: Հաւանաբար այս ձեւով նաեւ կ'ուզուի խրախուսել հոգեկան կարգ մը նրբաբողբոջ նկատուած տաղանդները:

Նկարիչներու կարգին պէտք է մասնաւորաբար յիշել տաղանդաւոր արուեստագէտ Արտաւազդ Պէրպէրեանի ներկայութիւնը, իսկ քանդակագործներուն մէջ՝ Տիգրանի ողորկ եւ կոր գիծերով մարմին առած փոքր քանդակները:

ժամանակի հրամայականն է այդ ուժերի միասնութիւնը, յապաղելը հաւասարազօր է «առանց երգի նահանջի»: Յապաղելը նշանակում է խզել սերունդների կապը, մեծապէս վնասել հայապահպանութեան պայքարին: Այս գործում, կարծում եմ, իր կարեւոր ասելիքն ու, մանաւանդ, անելիքն ունի նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, մի կազմակերպութիւն, որն ապացուցել ու ապացուցում է շարունակ, թէ ատակ է աւելի համապարփակ գործունէութեան, աւելի եռանդուն քայլերի:

Նման գործնական միասնութեան լաւագոյն նպատակին կարող է ծառայել լիբանանահայութեանը ցոյց տրուող բազմակողմանի աջակցութեան զօրացումը: Լիբանանի հայ համայնքը եզակի տեղ ու դեր ունի սփիւռքում, եւ պատահական չէ, որ թշնամիները եւ յետադիմական ուժերը այսօր ոչնչի առջեւ կանգ չեն առնում այդ գաղութը քայքայելու եւ, ի վերջոյ, վերացնելու զայն: Ի հարկէ, այս վտանգի դէմ մենք էլ ձեռներս ծալած չենք նստում: Թէ մայր հայրենիքը, թէ սփիւռքի կազմակերպութիւնները եւ առաջին հերթին Հ.Բ.Ը. Միութիւնը, աշխատում են ամէն կերպ օգնել Լիբանանին: Միասնական, միասնաբար աշխատելու դէպքում, այդ օգնութիւնը կը լինի աւելի արդիւնաւէտ ու շօշափելի:

Յարգելի Բարեկամներ,

Աւարտելով խօսքս, թոյլ տուէք կրկին շնորհաւորել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան փառապանծ 80-ամեակը, յաջողութիւն մաղթել նրա եռանդուն գործիչներին, մեծարգոյ նախագահ Ալեք Մանուկեանի գլխաւորութեամբ: Եւ թող շարունակ եւ մշտապէս ամրապնդուեն հայրենիք-սփիւռք կապերը ի շահ մեր ժողովրդի լաւագոյն երազանքների իրականացման:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ԵՒ ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՇԻՐԻՄՆԵՐՈՒՆ

Հոգեհանգիստի պահուն՝ (ձախէն աջ) Նուրհան Ֆրէնքեան (Կեդր. Վարչութեան պատուոյ անդամ), նախագահ Ալեք Մանուկեան, Գերշ. Գիւտ Եպս. Նագգաշեան եւ նկարի աջին՝ Պերճ Սեդրակեան (Կեդր. Վարչ. ատենադպիր)

Նախագահ Մանուկեան Զօր. Անդրանիկի յուշադամբանին առջեւ.

Յաւերժութիւնը կ'իմաստաւորէ մեր ժամանակաւոր գոյութիւնը: Մահը՝ անողոք եւ միշտ յաղթանակող մարդու դէմ տարած պայքարին մէջ, բայց միշտ նահանջող յաւերժութեան գաղափարին առջեւ:

Յաւերժութեան փառաբանութիւնն է մեր եկեղեցիի հոգեհանգիստի խորհուրդը: Պատարագի արարողութենէն ետք հոգեվիճակի ակնթարթային փոխակերպում տեղի կ'ունենայ: Վառուող մոմեր յաւերժութեան, մեր ժողովուրդի յաւերժութեան ճամբան կը լուսաւորեն:

Խոկումի՞ ներշնչումներու...

Ո՛չ: Կլանող մթնոլորտը այս էր 23 Նոյեմբեր, Կիրակի օր, Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցիին մէջ, առարկայական, շօշափելի:

Հ.Բ.Ը. Միութեան հիմնադրին՝ Պօղոս Նուպար Փաշայի եւ անոր յաջորդող գաղափարակից ջահակիրներուն Գալուստ Կիւլպէնկեանին, Զարեհ Պէյ Նուպարի, Արշակ Գարակէօզեանի, Միութեան համայն ողբացեալ նուիրատուներուն, կտակարարներուն եւ անդամներուն յիշատակին:

«... Սեմին վրայ վախճանին որուն մերձեցումը կը զգամ ամէն օր, կը մխիթարուիմ արդարեւ գիտնալով, թէ կատարուած գործը ունայն չէ, եւ թէ իմ յաջորդներուն կողմէ միեւնոյն եռանդով յառաջ պիտի տարուի Հ.Բ.Ը.Մ.-ը հաւատարիմ իր աւանդութեանց պիտի շարունակէ ժողովուրդին ու հայրենիքին մատուցանել այն ծառայութիւնները զոր իր գերազանցապէս հայրենասիրական նպատակը գծած է իրեն»:

Պօղոս Նուպար Փաշա, մահուան սեմին, 1930-ին, Հ.Բ.Ը. Միութեան 25-րդ տարեդարձին կը գրէր այս տողերը:

... Եւ 1986-ին, անոր ուխտին հաւատարիմներ կը փութային եկեղեցի: Հ.Բ.Ը. Միութեան 80-ամեակի առիթով Փարիզի մէջ կազմակերպուած համագումարին եւ հանդիսութիւններուն մասնակցողներ ակնածանքով կու գային Պօղոս Նուպարին յիշատակին, իրենց ուխտի երդումը ընելու:

Պատարագիչն էր Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Գիւտ Եպս. Նագգաշեանը: Բարի Սամարացիին օրինակէն մեկնելով վեր առաւ Հ.Բ.Ը. Միութեան գործունէութեան համազգային նշանակութիւնը:

Արարողութեան ներկայ էին նաեւ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տիրայր Արք. Մարտիկեան եւ Քանատայի առաջնորդ՝ Վազգէն Եպս. Քէշիշեանը:

Երգեցողութիւնները հազուագիւտ ներդաշնակութեամբ կատարեց մարսէյլի Սահակ-Մեսրոպ երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Խաչիկ Եղլմազեանի:

Միասնաբար երգուած «Հայր Մեր»էն վերջ ուխտագնացութիւն կատարուեցաւ Փէռ-Լաշէզի գերեզմանատունը՝ Պօղոս Նուպար Փաշայի շիրիմին: Աղօթքին յաջորդեց Հ.Բ.Ը. Միութեան ցկեանս նախագահ Ալեք Մանուկեանի խօսքը:

Պօղոս Նուպար Փաշան, ըսաւ նախագահը, մեր մարտնչումի մէջ՝ մեր ամէնէն հմուտ դիւանագէտը եղաւ, իսկ մեր անկումի ողբերգութեան մէջ մեր ամէնէն բարեգութ բարերարը: Անոր հոգիի մեծութիւնը կը հաւասարէր իր մտքի պայծառութեան:

Պօղոս Նուպարի տուն-դամբանէն խումբը ինքնաբերաբար ուղղուեցաւ սարերու արծիւին՝ զօրավար Անդրանիկին պատգամը լսելու:

Վերջացած էր ուխտագնացութիւնը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տարեկան Ընդհանուր Ժողովին եւ Միութեան 80-ամեակին առթիւ հրատարակուած էին երկու պատկերազարդ հատորներ. մէկը Միութեան տարեկան տեղեկագիրն էր, 103 մեծադիր էջերէ բաղկացած եւ Միութեան նիւթա-բարոյական վիճակը ներկայացնող ճաշակաւոր էջադրութեամբ, հրատարակուած Միացեալ Նահանգներու մէջ: Երկրորդը պատկերող Միութեան Ֆրանսայի Միութեան Ֆրանսայի յանձնաժողովին պատկերը եւ բովանդակելով Ա. Մանուկեան ցուցարահի մէջ ցուցադրուող կարգ մը գործերուն գունաւոր վերարտադրութիւնը: Մանաւանդ ջրաներկ մը, գործ Գրիգոր Նորիկեանի, որ կը պատկերէ Միութեան հիմնադիրներուն պատկերը: Այստեղ կարելի չէ չյիշատակել նաեւ Համերգին առթիւ հրատարակուած ներկայանալի յայտագիր-գրքոյկը:

Եւ հիմա շնորհաւորական եւ շնորհակալական մեր ջերմագին արտայայտութիւնը կ'երթայ 80-ամեակի հանդիսութեանց գործադիր յանձնախումբին, որուն անդամներէն իւրաքանչիւրին ինքնամոռաց աշխատանքին կը պարտի յոբելեանական ինչպէս Ընդհանուր Ժողովին արտակարգ յաջողութիւնը:

Թող թոյլ տրուի մեզի առնուազն թուել անձերը Յանձնախումբին որուն Ֆրանսայի կազմին անդամ էին՝ Էտուար Ադամեան, Յակոբ Գասարճեան, Միշէլ Սապպաղ, Վահէ Ճազմատարեան, Ռոժէ Զրբաշեան, Արաքսի Զրահեան, Գեղամ Թորոսեան, Սիւզի Իզմիրլեան Ճապրէրի, Գրիգոր Համբարձումեան, Լեւոն Քեպապճեան, Խաչիկ Տարաքճեան: Ամերիկայէն երեք անձեր ծառայեցին որպէս միջազգային համակարգիչ — Լուիզ Սիմոն, Պերճ Սեդրակեան եւ Ալիս Քիրիքեան: Յանձնաժողովին Պատուոյ Ատենապետն էր Ալեք Մանուկեան:

Նախագահը կ'ողջունէ կազմակերպիչ յանձնախումբի անդամները.

Եւրոպական Ս. Ծնունդի առիթով,
«Նոր Օր» կը շնորհաւորէ
Հայ Աւետարանական եւ Կաթողիկէ համայնքները:

25 Դեկտեմբերին խմբագրատունը փակ պիտի մնայ:
«Նոր Օր»ի յաջորդ թիւը լոյս պիտի տեսնէ
30 Դեկտեմբերին:

«Նոր Օր»ի
այս թիւը լոյս տեսած է
«Ապրիլ» տպարանի մէջ

5450 Santa Monica Boulevard
Los Angeles, CA 90029
(213) 467-9483